Թարգմանություն ***անգլերենից***

# Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն[1]

## Գլուխ 1
## Հիմնական սկզբունքներ

### Հոդված 1

Իրանի պետական կարգը՝ իսլամական հանրապետությունն է, որին, ճշմարտության և արդարության իշխանության հանդեպ ունեցած հավատքի հիման վրա, կողմ է քվեարկել Իրանի ընտրողների մեծ մասը՝ 98.2 %-ը՝ իսլամական արևային օրացույցի 1358թ. Ֆարվարդինի 9-ին և 10-ին, (լուսնային օրացույցի համաձայն 1399թ. Ջամադ ալ-Ուվալի 1-ին և 2-ին) (1979թ. մարտի 29-ին և 30-ին) մեծն այաթոլլա Խամենեի Առաջնորդությամբ իրականացված Իսլամական հաղթական հեղափոխությունից հետո անցկացված հանրաքվեի ժամանակ:

### Հոդված 2

Իսլամական Հանրապետության հիմքում ընկած է հավատքն առ՝

1. այն, որ Աստված մեկն է (ինչպես նշվում է «Ալլահից բացի այլ Աստված չկա» պնդման մեջ), որ Նա բացառիկ իշխանություն ունի, Նա է օրենքներ սահմանում և մարդը պետք է ենթարկվի Նրա կամքին;
2. աստվածային հայտնություն և, որ այն հիմնարար դեր է կատարում օրենքների մեկնաբանության մեջ;
3. Դատաստան և, որ այս հավատը կառուցողական դեր է խաղում դեպի Աստված տանող մարդու կատարելության ճանապարհին;
4. Աստվածային արդարություն՝ արարման և օրենքների սահմանման մեջ;
5. այն, որ իմամները /ղեկավարները/ պետք է հաջորդեն մեկը մյուսին, որ նրանք անսահման իշխանություն ունեն, և, որ այս սկզբունքը հիմնարար դեր է խաղում Իսլամական հեղափոխության շարանուկման մեջ;
6. մարդկային արժանապատվությունը և մարդու արժեքը, մարդու ազատությունը՝ Աստծո առաջ նրա պատասխանատվության հետ համատեղ, որն էլ ապահովում է հավասարություն, արդարություն, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային անկախություն, ազգային համերաշխություն և միասնություն՝

1. Ղուրանի և Սուննայի (Ղուրանից հետո կարևորությամբ երկրորդ սուրբ գիրքը, որում ներկայացվում է Մուհամեդ մարգարեի կյանքը) հիման վրա՝ Շարիաթի օրենքների անընդմեջ պահպանմամբ;
2. մարդկային գիտելիքների, ձեռքբերումների և փորձի, ինչպես նաև դրանց հետագա զարգացմանն ուղղված ջանքերի միջոցով;
3. չընդունելով և մերժելով կեղեքումների ենթարկելը և կեղեքումների ենթարկվելը, ինչպես նաև գերտիրապետության հարկադրանքը և դրա ընդունումը:

### Հոդված 3

2-րդ հոդվածում սահմանված նպատակներին հասնելու համար Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը կոչված է կիրառել իր բոլոր հնարավորությունները՝ հետևյալ արդյունքներն ապահովելու համար՝

[1] http://www.iranonline.com/iran/iran-info/government/constitution.html,http://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain?page=search&docid=_3ae6b56710&sk_ip=0&query=iran%20constitution

1. բարենպաստ մթնոլորտի ստեղծում՝ հավատքի, աստվածավախության վրա հիմնված բարոյական առաքինությունների ամրապնդման, անառակության և բարոյական անկման դեմ պայքարելու համար;
2. բոլոր ոլորտներում մարդկանց իրազեկվածության բարձրացում մամուլի և այլ ԶԼՄ-ների միջոցով;
3. անվճար կրթության և ֆիզիկական դաստիարակության ապահովում բոլորի համար բոլոր մակարդակներում, ինչպես նաև բարձրագույն կրթության հասանելիություն;
4. ոգու, հետազոտությունների և նորարարությունների նախաձեռնությունների ամրապնդում գիտության, տեխնոլոգիայի և մշակույթի, ինչպես նաև իսլամի ոլորտներում՝ ստեղծելով գիտահետազոտական կենտրոններ և խրախուսելով գիտաշխատողներին;
5. լիակատար հրաժարում գաղութատիրությունից և օտար ազդեցության կանխում;
6. բռնապետության, ինքնիշխանության և մոնոպոլիզմի վերացում;
7. օրենքի շրջանակներում քաղաքական և սոցիալական ազատությունների ապահովում;
8. բնակչության մասնակցության ապահովում քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ինքնորոշման մեջ;
9. անցանկալի խտրականության բոլոր տեսակների վերացում և արդար հնարավորությունների ապահովում բոլորի համար թե՛ նյութական, թե՛ հոգևոր ոլորտներում;
10. ճիշտ վարչական համակարգի ստեղծում և անկարևոր կառույցների վերացում;
11. համընդհանուր ռազմական կրթության միջոցով ազգային պաշտպանական համակարգի հնարավորինս ամրապնդում՝ անվտանգության, տարածքային ամբողջականության և երկրում իսլամական կարգի ապահովման նպատակով;
12. իսլամական նորմերի հիման վրա՝ ճիշտ և արդար տնտեսական համակարգի ստեղծում՝ բարեկեցության ապահովման, աղքատության, ինչպես նաև սննդի, բնակարանային պայմանների, աշխատանքի, առողջության հետ կապված խնդիրների վերացման և բոլորի համար սոցիալական անվտանգության ապահովման նպատակով;
13. անհատի ինքնաբավության բարելավում գիտական, տեխնիկական, արդյունաբերական, գյուղատնտեսական, ռազմական և այլ ոլորտներում;
14. քաղաքացիների, անկախ նրանց սեռից, բազմաբնույթ իրավունքների, իրավական պաշտպանության, ինչպես նաև օրենքի առաջ բոլորի հավասարության ապահովում;
15. Իսլամական եղբայրության սահմանների ընդլայնում և ամրապնդում, համագործակցություն մարդկանց միջև;
16. իսլամական նորմերի հիման վրա երկրի արտաքին քաղաքականության մշակում, նվիրվածություն բոլոր մահմեդականներին, անշահախնդիր աջակցություն աշխարհի կեղեքվածներին:

**Հոդված 4**

Բոլոր քաղաքացիական, քրեական, ֆինանսական, տնտեսական, վարչական, մշակութային, ռազմական, քաղաքական և այլ օրենքներն ու որոշումները պետք է հիմնված լինեն իսլամական նորմերի վրա: Սույն սկզբունքը բացարձակապես և ընդհանուր առմամբ վերաբերում է Սահմանադրության բոլոր հոդվածներին, ինչպես նաև բոլոր այլ օրենքներին և որոշումներին, իսկ իսլամական նորմերին՝ օրենքների, որոշումների համապատասխանության վերաբերյալ որոշումը կայացվում է Սահմանադրության պահապանների խորհրդի մահմեդական կրոնագետ-իրավագետների (ֆիկհների) կողմից:

**Հոդված 5**

Վալի ալ-Ասրի բացակայության ընթացքում (թո՛ղ Աստված արագացնի նրա վերածնունդը), երկրի և իմամաթի կառավարումը փոխանցվում է արդար և աստվածավախ իրավագետի, որը լայնամիտ է, քաջ, հնարամիտ, կազմակերպչական հմտություններ ունի: Ընտրված իրավագետը ստանձնում է սույն պարտավորությունները՝107-րդ հոդվածի համաձայն:

**Հոդված 6**
Իրանի Իսլամական Հանրապետությունում երկրի կառավարումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով հանրային կարծիքը, որն արտահայտվում է ընտրությունների, այդ թվում՝ Նախագահի, Իսլամական խորհրդատվական խորհրդի՝ Մեջլիսի ներկայացուցիչների, խորհուրդների անդամների ընտրությունների կամ հանրաքվեի միջոցով, որն անցկացվում է Սահմանադրության այլ հոդվածներում հատկորոշվող դեպքերում:

**Հոդված 7**
Համաձայն Ղուրանի այաթների («Նրանք խորհրդակցում են միմյանց հետ»: [42:38]) և («Առաջնորդի՛ր նրանց»:[3:159])՝ հետևյալ խորհրդատվական մարմինները՝ Իսլամական խորհրդատվական խորհուրդը՝ Մեջլիսը, տարածաշրջանի, շրջանների, քաղաքների, մարզերի և գյուղերի խորհուրդները և այլ նման ժողովները երկրի կառավարման հիմնական վարչական մարմիններն են: Այս խորհուրդներից յուրաքանչյուրի բնույթը, կազմավորման կարգը, իրավասությունը, պարտավորությունների և գործառույթների շրջանակը սահմանվում է սույն Սահմանադրությամբ և դրանից բխող օրենքներով:

**Հոդված 8**
Իրանի Իսլամական Հանրապետությունում բարության տարածման և չարության վերացման մասին այաթը / al-'amr bilma'ruf wa al-nahy 'an al-munkar/ համընդհանուր պարտավորություն է, որը մարդիկ պետք է կատարեն միմյանց նկատմամբ փոխադարձաբար, կառավարությունը՝ ժողովրդի նկատմամբ և ժողովուրդը՝ կառավարության նկատմամբ: Օրենքը սահմանում է սույն պարտավորության պայմանները, շրջանակները և բնույթը (սա կատարվում է Ղուրանի հետևյալ պատվիրանի համապատասխան՝ «Հավատացյալ կանայք և տղամարդիկ միմյանց պահապաններն են, նրանք բարիք են սերմանում և արմատախիլ են անում չարիքը»[9:71]):

**Հոդված 9**
Իրանի Իսլամական Հանրապետությունում երկրի ազատությունը, անկախությունը, միասնությունը և տարածքային ամբողջականությունն անբաժանելի են միմյանցից, և դրանց պահպանումը կառավարության և բոլոր քաղաքացիների պարտականությունն է: Ոչ մեկ՝ ո՛չ անհատ, ո՛չ խումբ, ո՛չ որևէ մարմին իրավունք չունի, ազատությունից օգտվելու պատրվակով, աննշան վնաս հասցնել Իրանի քաղաքական, մշակութային, տնտեսական և ռազմական անկախությանը կամ տարածքային ամբողջականությանը: Նույն կերպ ոչ մի պաշտոնատար անձ իրավունք չունի, երկրի անկախության և տարածքային ամբողջականության պահպանման պատրվակով, խախտել օրինական ազատությունները՝ նույնիսկ նոր օրենքներ և իրավական ակտեր ընդունելով:

**Հոդված 10**
Քանի որ ընտանիքը իսլամական հասարակության հիմնարար միավորն է, բոլոր օրենքները, իրավական ակտերը և նման փաստաթղթերն ու ծրագրերը պետք է ուղղված լինեն ընտանիքի կազմման դյուրացմանը, դրա սրբության և ընտանեկան հարաբերությունների ամրության պահպանմանը՝ իսլամական օրենքի և բարոյականության հիման վրա:

**Հոդված 11**
Համաձայն Ղուրանի սուրբ այաթի («Ձեր համայնքը միակն է, իսկ ես ձեր Տերն եմ. երկրպագե՛ք ինձ»:[21:92])՝ բոլոր մահմեդականները միասին մեկ ազգ են, և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը պարտավոր է մշակել իր ընդհանուր քաղաքականությունը՝ սատարելով, զարգացնելով մահմեդական ժողովուրդների սերտ հարաբերություններն ու միասնականությունը, կառավարությունը պարտավոր է նաև հնարավորինս ջանքեր գործադրել՝ իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային միասնությունն ապահովելու համար:

**Հոդված 12**
Իրանի պաշտոնական կրոնը իսլամի Շիա ուղղությունն է (ջաֆարիյյա), որի հիմնական սկզբունքը ընդմիշտ մնալու է անփոփոխ: Իսլամական այլ դավանանքները, այդ թվում՝ հանաֆիական, շաֆիական, մալիքիական, հանբալյան մազհաբները և զահիրը բավական տարածված են, և այս դավանանքների հետևորդներն ազատ են կատարել իրենց կրոնական ծեսերը՝ համաձայն իրենց կրոնական օրենքների: Այս դավանանքները պետական կարգավիճակ ունեն. դրանց հետևորդները կարող են կրոնական կրթություն ստանալ, իրենց դավանանքի միջոցով լուծել իրենց քաղաքացիական և անձնական խնդիրները (ամուսնություն, ամուսնալուծություն, ժառանգություն և կտակներ), դրանց հետ կապված խնդիրների դեպքում դիմել դատարան: Երկրի այն շրջաններում, որտեղ այս դավանանքներից (իսլամական իրավագիտական-կրոնական ուսմունք) որևէ մեկի հետևորդները մեծամասնություն են կազմում, տեղական խորհուրդների իրավասության շրջանակներում պետք է մշակվեն տեղական օրենքներ և կանոնակարգեր՝ հաշվի առնելով համապատասխան կրոնական ուսմունքը, պահպանելով այլ դավանանքների հետևորդների իրավունքները:

**Հոդված 13**
Իրանցի զրադաշտները, հրեաները և քրիստոնյաները միակ կրոնական փոքրամասնություններն են, որոնք օրենքի սահմաններում ազատ են կատարել իրենց կրոնական ծեսերը և արարողությունները և իրենց անձնական և կրոնական կրթության հարցերում գործել իրենց ուսմունքի համաձայն:

**Հոդված 14**
Համաձայն սուրբ այաթի («Աստված չի արգելում ձեզ բարի և արդար լինել այն մարդկանց նկատմամբ, ովքեր չեն կռվում ձեր դեմ ձեր դավանանքի պատճառով և, որոնք չեն վտարում ձեզ ձեր տներից»[60:8])՝ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը և բոլոր մահմեդականները պարտավոր են ոչ մահմեդականների հետ վարվել բարոյական նորմերի և իսլամական արդարության և բարության սկզբունքների համաձայն և հարգել նրանց իրավունքները: Այս սկզբունքը գործում է այն անձանց դեպքում, որոնք դուրս չեն գալիս իսլամի և Իրանի Իսլամական Հանրապետության դեմ, կամ չեն ներգրավվում որևէ դավադրության մեջ:

## Գլուխ 2
## Երկրի պետական լեզուն, այբուբենը, օրացույցը և դրոշը

**Հոդված 15**
Իրանի պետական լեզուն և այբուբենը, բնակչության լինգվա ֆրանկան պարսկերենն է և պարսկերեն այբուբենը: Պաշտոնական փաստաթղթերը, նամակագրությունը, տեքստերը, ինչպես նաև դասագրքերը պետք է գրված լինեն պարսկերեն լեզվով, պարսկերեն այբուբենով: Այնուամենայնիվ, տարածաշրջանային և ցեղային առանձնահատկություններով պայմանավորված

լեզուները կարող են պարսկերենի հետ համատեղ կիրառվել մամուլում և այլ ԶԼՄ-ներում, ինչպես նաև ազգային գրականության դասավանդման ժամանակ:

**Հոդված 16**
Քանի որ Ղուրանի, իսլամական տեքստերի և ուսմունքների լեզուն արաբերենն է, իսկ պարսկերեն գրականությունը սերտորեն կապված է այս լեզվի հետ, ապա այն պետք է դասավանդվի տարրական դասարաններն ավարտելուց հետո, միջնակարգ դպրոցի բոլոր դասարաններում և բոլոր դասերի ժամանակ:

**Հոդված 17**
Երկրի պետական տարեգրության սկզբնական կետը իսլամի մարգարեի հիջրան է (փախուստը Մադինա) /«Թո՛ղ Աստծո խաղաղությունն ու օրհնությունը նրա և նրա ընտանիքի հետ լինեն»/: Կիրառվում են թե՛ արևային, թե՛ լուսնային իսլամական օրացույցներ, սակայն պետական կառույցները գործում են արևային օրացույցի համաձայն: Շաբաթվա պաշտոնական հանգստյան օրը ուրբաթն է:

**Հոդված 18**
Իրանի պետական դրոշը կազմված է կանաչ, սպիտակ և կարմիր գույներից. դրոշի վրա պատկերված է Իսլամական Հանրապետության հատուկ խորհրդանիշը և երևում է կարգախոսը՝ «Ալլահ Աքբար» /«Աստված մեծ է»/:

## Գլուխ 3
## Ժողովրդի իրավունքները

**Հոդված 19**
Անկախ իրենց էթնիկ կամ ցեղային պատկանելիությունից՝ բոլոր իրանցիներն ունեն հավասար իրավունքներ. մաշկի գույնի, ռասայի, լեզվի, արտաքինի պատճառով ոչ ոք արտոնյալ չի համարվում:

**Հոդված 20**
Երկրի բոլոր քաղաքացիները, անկախ սեռից, հավասարապես պաշտպանված են օրենքի կողմից և օգտվում են մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից՝ համաձայն իսլամական նորմերի:

**Հոդված 21**
Կառավարությունը պարտավոր է երաշխավորել կանանց իրավունքների պահպանումը բոլոր ոլորտներում՝ իսլամական նորմերի համաձայն: Կառավարությունը պարտավոր է նաև՝

1. ստեղծել բարենպաստ պայմաններ կանանց անհատականության զարգացման և նրանց բոլոր իրավունքների վերականգնման համար;
2. աջակցել մայրերին, հատկապես հղիության և ծննդաբերության ընթացքում, ինչպես նաև իր խնամքի տակ վերցնել խնամազուրկ երեխաներին;
3. ստեղծել իրավասու դատարաններ՝ ընտանիքները պաշտպանելու և պահպանելու նպատակով;
4. հատուկ ապահովագրություն տրամադրել այրիներին, տարեց և միայնակ կանանց;
5. օրինական խնամակալի բացակայության դեպքում, երեխաների շահերից ելնելով, նրանց խնամքը հանձնել արժանավոր մայրերին:

**Հոդված 22**
Անհատի արժանապատվությունը, կյանքը, գույքը, իրավունքները, բնակության վայրը և մասնագիտությունը անձեռնմխելի են՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

**Հոդված 23**
Արգելվում է ստուգել անհատի համոզմունքները. ոչ ոք չի կարող ենթարկվել պարսավանքների կամ քննադատության իր համոզմունքների պատճառով:

**Հոդված 24**
Հրատարակչությունները և մամուլն իրավունք ունեն ազատորեն տարածել նյութեր և գաղափարներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վնաս են հասցնում իսլամի հիմնարար սկզբունքներին կամ հանրության իրավունքներին: Սույն բացառությամբ նախատեսված դեպքերը սահմանվում են օրենքով:

**Հոդված 25**
Նամակներ ստուգելը և հասցեատիրոջը դրանք չհանձնելը, հեռախոսազրույցները ձայնագրելը և հրապարակելը, հեռագրեր և տելեքս հաղորդագրություններ հրապարակելը կամ դրանք հասցեատիրոջը չհանձնելը, գրաքննությունը, գաղտնալսումը և գաղտնի հետաքննության բոլոր տեսակներն արգելվում են՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով:

**Հոդված 26**
Թույլատրվում է ստեղծել/հիմնել կուսակցություններ, կազմակերպություններ, քաղաքական կամ մասնագիտական միություններ, ինչպես նաև իսլամական կամ կրոնական փոքրամասնությունների այլ համայնքներ, եթե դրանք չեն խախտում անկախության, ազատության, ազգային միասնության սկզբունքները, իսլամական նորմերը կամ Իսլամական Հանրապետության հիմքերը: Չի կարելի որևէ մեկին արգելել դառնալ վերոնշյալ խմբերի անդամ և չի կարելի հարկադրել որևէ մեկին անդամակցել դրանց:

**Հոդված 27**
Հանրային հավաքներ և երթեր կարող են անցկացվել, եթե հավաքների/երթերի մասնակիցների մոտ բացակայում են զենքեր և, եթե դրանք վնաս չեն հասցնում իսլամի հիմնարար սկզբունքներին:

**Հոդված 28**
Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ընտրել այն մասնագիտությունը, որը ցանկանում է, եթե դա չի հակասում իսլամին և հանրության շահերին, ինչպես նաև չի խախտում մյուսների իրավունքները: Կառավարությունը պարտավոր է, հաշվի առնելով հասարակության համար տարբեր տեսակի աշխատանքների առկայության անհրաժեշտությունը, յուրաքանչյուր քաղաքացուն ապահովել աշխատելու հնարավորությամբ և ստեղծել հավասար պայմաններ այդ աշխատանքը կատարելու համար:

**Հոդված 29**
Բոլորն իրավունք ունեն թոշակի անցնելու, գործազրկության, ծերության, հաշմանդամության, խնամակալի բացակայության, ճանապարհային խնդիրների, պատահարների պատճառով, ապահովագրության կողմից կամ այլ եղանակներով տրամադրվող սոցիալական ապահովագրություն ստանալ, օգտվել առողջապահական ծառայություններից, խնամք և բուժում ստանալ: Կառավարությունը պարտավոր է, ազգային եկամուտների և բնակչության կատարած

ներդրումների հաշվին, օրենքների համաձայն, յուրաքանչյուր քաղաքացու վերոնշյալ ծառայությունները և որոշակի ֆինանսական աջակցություն տրամադրել:

**Հոդված 30**

Կառավարությունը պարտավոր է իր բոլոր քաղաքացիներին, մինչև միջնակարգ դպրոցն ավարտելը, տրամադրել անվճար կրթություն ստանալու հնարավորություն և ընդլայնել բարձրագույն անվճար կրթություն ստանալու հնարավորություններն այնքան, որքան դա հնարավոր է երկրում ինքնաբավ լինելու համար:

**Հոդված 31**

Յուրաքանչյուր իրանցու և յուրաքանչյուր իրանական ընտանիքի իրավունքն է ունենալ իրենց պահանջմունքներին համապատասխան բնակության վայր: Կառավարությունը պարտավոր է պահպանել սույն հոդվածի դրույթները՝ առաջնահերթություն տալով առավել կարիքավորներին, մասնավորապես գյուղական և աշխատավոր բնակչությանը:

**Հոդված 32**

Ոչ ոք չպետք է կալանավորվի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով սահմանված վճռով և կարգով: Կալանավորման դեպքում մեղադրյալին պետք է գրավոր ներկայացվի և պարզաբանվի մեղադրանքը և կալանավորման պատճառը: Նախնական գործը պետք է ներկայացվի իրավասու դատական մարմիններ քսանչորս ժամվա ընթացքում՝ դատական գործը հնարավորինս շուտ սկսելու համար: Սույն հոդվածի ցանկացած խախտում պատժվում է օրենքով: [2]

**Հոդված 33**

Ոչ ոք չպետք է վտարվի իր բնակության վայրից, ոչ ոքի չի կարելի արգելել բնակություն հաստատել այնտեղ, որտեղ տվյալ անձը ցանկանում է, ոչ ոքի չի կարելի հարկադրել բնակություն հաստատել որևէ վայրում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

**Հոդված 34**

Յուրաքանչյուր քաղաքացու անառարկելի իրավունքն է արդարություն հաստատել՝ դիմելով իրավասու դատարաններին: Բոլոր քաղաքացիներն իրավունք ունեն դիմել դատարան, և ոչ ոքի չի կարելի արգելել դիմել այն դատարան, ուր նա ըստ օրենքի իրավունք ունի դիմել:

**Հոդված 35**

Բոլոր դատարաններում երկու կողմերն էլ փաստաբան ունենալու իրավունք ունեն, իսկ եթե չեն կարող փաստաբան ընտրել, ապա նրանց պետք է տրամադրվի իրավախորհրդատու:

**Հոդված 36**

Միայն օրենքի համաձայն և միայն իրավասու դատարանն է կարող դատավճիռ կայացնել և այն իրականացնել:

**Հոդված 37**

Գործում է անմեղության կանխավարկածը. անձը մեղավոր չի համարվում, եթե իրավասու դատարանի կողմից նրա մեղքն ապացուցված չի համարվում:

---

[2] http://www.wipo.int/edocs/lexdocs/laws/en/ir/ir001en.pdf

**Հոդված 38**
Խոստովանություն կամ տեղեկատվություն ստանալու նպատակով անձին որևէ տանջանքների ենթարկելն արգելվում է: Արգելվում է անձին հարկադրել վկայություն տալ, խոստովանել կամ երդվել. ցանկացած նման վկայություն, խոստովանություն կամ երդում որևէ արժեք չունի: Օրենքի համաձայն սույն հոդվածի խախտումը պատժվում է օրենքով:

**Հոդված 39**
Ըստ օրենքի արգելվում է որևէ վիրավորանք հասցնել ձերբակալված, բանտարկված, կալանավորված կամ աքսորված անձի արժանապատվությանը և համբավին. սա պատժվում է օրենքով:

**Հոդված 40**
Ոչ ոք չի կարող իր իրավունքներն իրականացնել՝ վնաս հասցնելով մյուսներին կամ հանրային շահերին:

**Հոդված 41**
Իրանի քաղաքացիությունը յուրաքանչյուր իրանցու անառարկելի իրավունքն է, իսկ կառավարությունը չի կարող որևէ իրանցու զրկել քաղաքացիությունից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անձն ինքն է միջնորդություն ներկայացնում դրա համար կամ երբ այլ պետության քաղաքացիություն է ընդունում:

**Հոդված 42**
Օրենքի համաձայն օտարերկրյա քաղաքացիները կարող են Իրանի քաղաքացիություն ստանալ: Նման անձինք կարող են զրկվել քաղաքացիությունից, եթե մեկ այլ պետություն նրանց որպես իր երկրի քաղաքացի է ճանաչում կամ եթե նրանք մեկ այլ պետություն են դիմում տվյալ երկրի քաղաքացիություն ստանալու նպատակով:

## Գլուխ 4
## Տնտեսություն և ֆինանսներ

**Հոդված 43**
Հասարակության տնտեսական անկախության, մարդու զարգացման գործընթացում նրա պահանջմունքների բավարարման և նրա անկախության և արժանապատվության ապահովման, աղքատությունը արմատախիլ անելու նպատակով՝ Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսությունը հիմնվում է հետևյալ դրույթների վրա.

1. բոլոր քաղաքացիների հիմնական պահանջմունքների ապահովում. բնակության վայր, սնունդ, հագուստ, հիգիենայի անհրաժեշտ պարագաներ, բուժօգնություն, կրթություն ստանալու և ընտանիք ստեղծելու հնարավորություններ;
2. բոլորի համար աշխատելու պայմանների և հնարավորությունների ապահովում, որպեսզի բոլորը ձեռք բերեն լրիվ զբաղվածություն; կոոպերատիվների միջոցով աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ միջոցների տրամադրում բոլոր այն անձանց, որոնք կարող են աշխատել, բայց բավարար միջոցներ չունեն՝ հատկացնելով նրանց անտոկոս վարկեր կամ օգնություն այլ օրինական ճանապարհներով, որը չի հանգեցնում հարստության կենտրոնացմանը առանձին անձանց կամ խմբերի ձեռքերում կամ այդ միջոցների անհարկի շրջանառությանը, կամ որի արդյունքում կառավարությունը չի դառնում միակ խոշոր

գործատուն: Սույն քայլերը հարկ է ձեռնարկել հաշվի առնելով երկրի զարգացման յուրաքանչյուր փուլում տնտեսական ընդհանուր աճի համար սահմանված պահանջները:

3. հարկ է այնպես պլանավորել երկրի տնտեսությունը, որ յուրաքանչյուրի աշխատանքի ձևը, բովանդակությունը, ինչպես նաև աշխատաժամանակը թույլ տան նրան, բացի իր զբաղվածության ոլորտում ջանքեր գործադրելուց, ազատ ժամանակ և էներգիա ունենալ և զբաղվել բազմակողմանի ինքնազարգացմանն ուղղված հոգևոր, քաղաքական և սոցիալական գործունեությամբ, ակտիվ մասնակցել երկրի կառավարմանը, կատարելագործել հմտությունները և զարգացնել ստեծագործ միտքը:
4. մասնագիտության ընտրության ազատություն; արգելվում է անձին հարկադրել որևէ աշխատանքի; աշխատանքային շահագործման կանխարգելում;
5. արգելվում է վնաս հասցնել ուրիշներին, արգելվում է մենաշնորհը, վաշխառությունը և այլ ապօրինի և անընդունելի գործունեության տեսակները;
6. արգելվում է շռայլությամբ և միջոցներն անմտորեն վատնել տնտեսության բոլոր ոլորտներում, այդ թվում՝ սպառման, ներդրումների, արտադրության, բաշխման և այլ բնագավառներում եւ ծառայություններում;
7. գիտության և տեխնոլոգիաների կիրառում, մասնագետների վերապատրաստում՝ համաձայն երկրի տնտեսության զարգացման պահանջների;
8. երկրի տնտեսության նկատմամբ արտաքին տնտեսական գերակայության կանխարգելում;
9. առանձնահատուկ ուշադրություն գյուղատնտեսության, անասնաբուծության և արդյունաբերական արտադրության աճին՝ հանրության պահանջմունքները բավարարելու, երկիրը հզորացնելու և անկախ դարձնելու նպատակով:

**Հոդված 44**

Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսությունը հիմնվում է երեք՝ պետական, կոոպերատիվ և մասնավոր սեկտորների, ինչպես նաև տնտեսության համակարգված և ճշգրիտ պլանավորման վրա: Պետական սեկտորը ներառում է բոլոր խոշոր և մայր արդյունաբերական կազմակերպությունները, արտաքին առևտուրը, էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող ընկերությունները, ամբարտակները և ոռոգման խոշոր ցանցերը, ռադիոն և հեռուստատեսությունը, փոստային ծառայությունը, հեռագրական կապի և հեռախոսային ցանցի ծառայությունները, քաղաքացիական ավիացիան, բեռնափոխադրումները, ճանապարհները, երկաթգծերը և այլն: Վերևում թվարկվածները գտնվում են պետության տիրապետության ներքո որպես հանրային սեփականություն: Կոոպերատիվ սեկտորը ներառում է իսլամական նորմերի համաձայն քաղաքային և գյուղական բնակավայրերում հիմնվող, արտադրությանը և բաշխմանն առնչվող կոոպերատիվ ընկերություններ և ձեռնարկություններ: Մասնավոր սեկտորը ընդգրկում է գյուղատնտեսության, անասնաբուծության, արդյունաբերության, առևտրի և այլ ծառայությունների այն ոլորտները, որոնք լրացնում են պետության և կոոպերատիվ սեկտորների տնտեսական գործունեությունը: Վերոնշյալ երեք սեկտորներում սեփականությունը գտնվում է Իսլամական Հանրապետության օրենքի պաշտպանության ներքո, եթե այս սեփականության իրավունքը չի հակասում սույն գլխով նախատեսված հոդվածներին, իսլամի օրենքներին, նպաստում է երկրի տնտեսական զարգացմանը և առաջընթացին և վնաս չի հասցնում հասարակությանը: Սույն սեկտորների գործունեության [ճշգրիտ] շրջանակը, ինչպես նաև տվյալ գործունեության կանոնակարգերը և պայմանները սահմանվում են օրենքով:

**Հոդված 45**

Հանրային գույքն ու ունեցվածքը, մասնավորապես անմշակ կամ լքված հողատարածքները, հանքային ավանդները, ծովերը, լճերը, գետերը և այլ ընդհանուր ջրային ռեսուրսները, սարերը, դաշտավայրերը, անտառները, ճահճուտային տեղանքները, որևէ մեկի սեփականությունը չհանդիսացող արոտավայրերը, առանց ժառանգների մնացած ժառանգությունը, սեփականությունը, որի սեփականատերը որոշված չէ, հանրային գույքը, որն առգրավվել է այն յուրացնողներից, գտնվում է իսլամական պետության տիրապետության ներքո, որպեսզի կառավարությունն օգտագործի այն հօգուտ հանրային շահերի: Օրենքը սահմանում է հանրային գույքի և ունեցվածքի վերոնշյալ մասերի տնօրինման, օգտագործման ընթացակարգերը:

**Հոդված 46**

Յուրաքանչյուր ոք իր օրինական աշխատանքի հաշվին ստացվող եկամտի/շահույթի սեփականատերն է: Ոչ ոք չի կարող, իր սեփականության իրավունքի պատրվակով, ուրիշին զրկել աշխատելու և եկամուտ ստանալու հնարավորությունից:

**Հոդված 47**

Օրինավոր ճանապարհով ստացված անձնական գույքի իրավունքը պահպանվում է: Անձնական գույքի վերաբերյալ նորմերը սահմանվում են օրենքով:

**Հոդված 48**

Մարզերի միջև բնական ռեսուրսների շահագործման, պետական եկամուտների օգտագործման, ինչպես նաև երկրի տարբեր մարզերի և տարածաշրջանների միջև տնտեսական գործունեության բաշխման հարցերում խտրականությունը բացառվում է՝ այսպիսով ապահովելով անհրաժեշտ կապիտալի և միջոցների հասանելիությունը յուրաքանչյուր տարածաշրջանին՝ համապատասխան իր պահանջներին և ներուժին:

**Հոդված 49**

Կառավարությունը պարտավոր է առգրավել վաշխառության, յուրացման, կաշառակերության, զեղծարարության, գողության, դրամախաղի, ռեսուրսների, պետական պայմանագրերի և գործարքների չարաշահման միջոցով, հանրային ունեցվածք համարվող անմշակ հողատարածքների և այլ ռեսուրսների վաճառքից, ինչպես նաև կաշառակերությամբ զբաղվող կառույցների գործունեության արդյունքում և այլ ապօրինի միջոցներով և ճանապահներով ձեռք բերված հարստությունը և վերադարձնել ապօրինի յուրացվածը օրինական սեփականտիրոջը, իսկ սեփականատիրոջ բացակայության դեպքում՝ այդ հարստությունը/միջոցները փոխանցել պետական գանձապետարան: Պետությունը պարտավոր է խստագույնս պահպանել սույն սկզբունքը՝ իսլամի օրենքի համաձայն՝ հետաքննությունից և անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելուց հետո:

**Հոդված 50**

Իրանի Իսլամական Հանրապետությունում հասարակությունը պարտավոր է պահպանել շրջակա միջավայրը, որում պետք է անցնի ներկա և ապագա սերունդների հասարակական կյանքը և զարգացումը: Այդ պատճառով արգելվում են տնտեսական և այլ գործունեության այն տեսակները, որոնք ակնհայտորեն աղտոտում են շրջակա միջավայրը կամ անդառնալի վնաս են հասցնում դրան:

**Հոդված 51**

Հարկերը սահմանվում են բացառապես միայն օրենքով: Հարկերից ազատման և հարկերի նվազեցման դեպքերը սահմանվում են օրենքով:

**Հոդված 52**

Երկրի տարեկան բյուջեն մշակվում է կառավարության կողմից օրենքով սահմանված կարգով և ներկայացվում Մեջլիսին՝ քննարկման և հաստատման համար: Բյուջեում ներկայացված ցուցանիշների ցանկացած փոփոխություն իրականացվում է օրենքով նախատեսված կարգով:

**Հոդված 53**

Կառավարության բոլոր եկամուտները կուտակվում են Կենտրոնական գանձապետարանի պետական հաշիվների վրա: Հաստատված բաշխումների շրջանակներում բոլոր ծախսերն իրականացվում են համաձայն օրենքի:

**Հոդված 54**

Պետական ֆինանսական մարմինը գտնվում է Մեջլիսի անմիջական վերահսկողության ներքո: Սույն մարմնի կառուցվածքը, գործունեության և կառավարման տեսակը Թեհրանում և մարզկենտրոններում սահմանվում է օրենքով:

**Հոդված 55**

Պետական ֆինանսական մարմինը, օրենքով սահմանված կարգով, ստուգում և վերահսկում է նախարարությունների, պետական կառույցների և ձեռնարկությունների, ինչպես նաև կազմակերպությունների բոլոր հաշիվները, որոնք որևէ կերպ օգտագործում են երկրի պետական բյուջեն՝ համոզվելու համար, որ ծախսերը չեն գերազանցում բաշխման համար նախատեսված գումարը և որ յուրաքանչյուր գումար ծախսվում է սահմանված նպատակի համար: Օրենքի համաձայն՝ պետական ֆինանսական մարմինը հավաքագրում է բոլոր անհրաժեշտ հաշիվները, փաստաթղթերը, հաշվարկները և Մեջլիսին ներկայացնում յուրաքանչյուր տարվա համար մշակված բյուջեն՝ կից տրամադրելով իր առաջարկություններն ու մեկնաբանությունները: Սույն հաշվետվությունը պետք է հրապարակվի հանրության համար:

## Գլուխ 5

## Ժողովրդի ինքնիշխանությունը և դրա վրա հիմնված իշխանության մարմինները

**Հոդված 56**

Աշխարհի և մարդկության նկատմամբ բացարձակ իշխանությունը պատկանում է Աստծուն, և Աստված է մարդուն դարձրել իր հասարակական կյանքի տերը: Ոչ ոք չի կարող մարդուն զրկել այս աստվածային իրավունքից կամ այս իրավունքից վեր դասել որևէ անհատի կամ խմբի շահերը: Ժողովուրդը կիրարկում է Աստծո կողմից տրված այս իրավունքը՝ սույն հոդվածներով սահմանված կարգով:

**Հոդված 57**

Իրանի Իսլամական Հանրապետությունում իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջոցով, որոնք գործում են Իմամաթի բացարձակ հսկողության ներքո, Վիլայաթ ալ-ֆիկհի հիման վրա՝ համաձայն Սահմանադրության ներքո շարադրյալ հոդվածների: Վերոնշյալ իշխանությունները մեկը մյուսից անկախ են:

**Հոդված 58**
Օրենսդիր իշխանությունն իրականացվում է Իսլամական խորհրդատվական խորհրդի՝ Մեջլիսի կողմից, որը ձևավորվում է բնակչության կողմից ընտրվող ներկայացուցիչներից: Սույն մարմնի կողմից ընդունված օրենքները, անցնելով ստորև նշվող հոդվածներում ներակայացվող փուլերով, փոխանցվում են գործադիր և դատական իշխանություններին իրականացման համար:

**Հոդված 59**
Կարևորագույն տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային հարցերի վերաբերյալ որոշում կայացնելիս՝ օրենսդիր իշխանությունն իրականացվում է հանրաքվեի միջոցով՝ ժողովրդի անմիջական քվեարկությամբ: Անմիջականորեն հանրության կարծիքին դիմելու պահանջը պետք է հաստատվի Մեջլիսի անդամների ընդհանուր թվի երկու երրորդի կողմից:

**Հոդված 60**
Գործադիր իշխանությունն իրականացվում է Նախագահի և նախարարների կողմից՝ բացառությամբ այն դեպքերի, որոնց վերաբերյալ, համաձայն սույն Սահմանադրության, անմիջականորեն որոշում է կայացնում երկրի Առաջնորդը:

**Հոդված 61**
Դատական իշխանությունն իրականացվում է դատական մարմինների կողմից, որոնք ձևավորվում են իսլամական նորմերի համաձայն, և որոնց տրվում է դատական վեճեր քննելու և կարգավորելու, հանրության իրավունքները պաշտպանելու, արդարությունը պահպանելու և ամրապնդելու, ինչպես նաև Շարիաթի համաձայն պատիժներ իրականացնելու իրավասություն:

## Գլուխ 6
## Օրենսդիր իշխանություն
### 6.1 Իսլամական խորհրդատվական խորհուրդ՝ Մեջլիս

**Հոդված 62**
Իսլամական խորհրդատվական խորհուրդը՝ Մեջլիսը կազմվում է ժողովրդի ներկայացուցիչներից՝ ուղղակի գաղտնի քվեարկությամբ: Ընտրողներին և թեկնածուներին առաջադրվող պահանջները, ինչպես նաև ընտրությունների կարգը սահմանվում է օրենքով:

**Հոդված 63**
Մեջլիսում պատգամավորներն ընտրվում են չորս տարի ժամկետով: Յուրաքանչյուր հաջորդ շրջանի համար ընտրությունները պետք է անցկացվեն մինչ նախորդ գումարման ավարտը, որպեսզի երկիրն առանց Մեջլիսի չմնա:[3]

**Հոդված 64**
Մեջլիսում պատգամավորների թիվը երկու հարյուր յոթանասունն է. իսլամական արևային օրացույցի համաձայն 1368թ.-ին անցկացված հանրաքվեից սկսած, մարդկային, քաղաքական, աշխարհագրական և այլ նման գործոններով պայմանավորված, պատգամավորների սահմանված թիվը կարող է աճել 20-ով՝ յուրաքանչյուր 10 տարին մեկ անգամ: Զրադաշտները և հրեաներն ընտրում են մեկական պատգամավոր, սիրիացիները և քաղդեական քրիստոնյաները միասին ընտրում են մեկ պատգամավոր, երկրի հյուսիսում և հարավում բնակվող հայ քրիստոնյաներն ընտրում են մեկական պատգամավոր: Ընտրատարածքների սահմանները և ներկայացուցիչների քանակը սահմանվում է օրենքով:

---
[3] http://www.wipo.int/edocs/lexdocs/laws/en/ir/ir001en.pdf

**Հոդված 65**
Ընտրություններից հետո Իսլամական խորհրդատվական խորհրդի նիստերի ժամանակ կայացված որոշումներն օրինական են համարվում, եթե նիստերին մասնակցում է պատգամավորների ընդհանուր թվի երկու երրորդը: Իրավական ակտերն ու օրինագծերն ընդունվում են հաստատված ներքին կանոնակարգի համաձայն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Սահմանադրությամբ սահմանվում է հատուկ քվորում: Խորհրդի ներքին կանոնակարգի հաստատման համար անհրաժեշտ է, որպեսզի կողմ քվեարկի ներկա պատգամավորների երկու երրորդը:

**Հոդված 66**
Մեջլիսի Նախագահի և Նախագահող խորհրդի ընտրության կարգը, հանձնաժողովների թիվը և դրանց գործունեության ժամկետը, բանակցությունների անցկացման և Մեջլիսի կազմակերպչական հարցերը սահմանվում են Խորհրդի ներքին կանոնակարգով:

**Հոդված 67**
Մեջլիսի առաջին նիստի ժամանակ պատգամավորները պարտավոր են կարդալ երդման ստորև ներկայացվող տեքստը և ստորագրել այն՝
*Հանուն Ողորմած, Գթասիրտ Աստծո: Սուրբ Ղուրանով երդվում եմ Բարձրյալ և Ամենակարող Աստծո անունով և իմ մարդկային արժանապատվությամբ պարտավորվում եմ պաշտպանել Իսլամը և պահպանել Իրանի ժողովրդի Իսլամական հեղափոխության ձեռքբերումները և Իսլամական Հանրապետության հիմքերը; լինել այն ամենի արդար պահապանը, որ վստահվել է ինձ՝ ժողովրդի կողմից, լինել ժողովրդի հավատարիմ ներկայացուցիչը, ազնվորեն և բարեպաշտորեն կատարել իմ պարտավորությունները; միշտ հավատարիմ մնալ երկրի անկախության և հզորության սկզբունքներին; ժողովրդի առջև կատարել իմ պարտավորությունները, ծառայել իմ ժողովրդին; պահպանել Սահմանադրությունը; իմ բանավոր և գրավոր հայտարարություններում, իմ տեսակետն արտահայտելիս միշտ մտածել երկրի անկախության, ժողովրդի ազատության և նրա շահերի պաշտպանության մասին:*
Կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները երդում են տալիս՝ հիշատակելով իրենց սուրբ գրքերը: Առաջին նիստին չմասնակցող պատգամավորները պարտավոր են երդում տալ առաջին նիստի ժամանակ, որին նրանք կմասնակցեն:

**Հոդված 68**
Պատերազմի և երկրի ռազմական օկուպացիայի ժամանակ օկուպացված տարածքներում կամ ամբողջ երկրում ընտրությունները, Հանրապետության Նախագահի առաջարկությամբ, Իսլամական խորհրդատվական խորհրդի անդամների ընդհանուր թվի երեք քառորդի համաձայնությամբ և Սահմանադրության պահապանների խորհրդի հաստատմամբ, կարող են հետաձգվել որոշակի ժամանակով: Մեջլիսի նոր կազմ չձևավորվելու դեպքում՝ Մեջլիսը շարունակելու է իր աշխատանքը նույն աշխատակազմով:

**Հոդված 69**
Իսլամական խորհրդատվական խորհրդում քննարկումները պետք է հրապարակային լինեն, նիստերի վերաբերյալ ամբողջական հաշվետվությունները պետք է հաղորդվի ռադիոյով և հրապարակվի պաշտոնական տեղեկագրում՝ հանրությանն իրազեկելու նպատակով: Արտակարգ իրավիճակներում, Նախագահի, նախարարներից որևէ մեկի կամ Մեջլիսի տաս պատգամավորների պահանջով, կարող է անցկացվել փակ նիստ, եթե դա անհրաժեշտ է երկրի անվտանգության համար: Փակ նիստի ժամանակ ընդունված որոշումներն օրինական ուժ ունեն, միայն եթե Սահմանադրության պահապանների խորհրդի ներկայությամբ՝ այդ որոշումներին կողմ

է քվեարկել պատգամավորների ընդհանուր թվի երեք քառորդը: Արտակարգ իրավիճակը հաղթահարելուց հետո նման փակ նիստերի հաշվետվությունների հետ մեկտեղ հանրության համար պետք է հրապարակվեն այն որոշումները, որոնք կայացվել են այդ նիստերի ժամանակ:

**Հոդված 70**

Նախագահը, նրա տեղակալները և նախարարները կարող են անհատապես կամ միասին մասնակցել Մեջլիսի բաց նիստերին: Նրանց կարող են ուղեկցել նաև իրենց խորհրդականները: Եթե Մեջլիսի անդամներն անհրաժեշտ համարեն՝ նախարարները պարտավոր են ներկա գտնվել նիստերին: [Եվ ընդհակառակը], ցանկացած ժամանակ նրանք կարող են ելույթ ունենալ, երբ դիմեն նման պահանջով:

## Օրենսդիր իշխանություն

### 6.2 Իսլամական խորհրդատվական խորհրդի՝ Մեջլիսի իրավասությունները

**Հոդված 71**

Իսլամական խորհրդատվական խորհուրդը՝ Մեջլիսը կարող է սույն Սահմանադրությամբ սահմանված իր իրավասությունների շրջանակներում օրենքներ ընդունել ցանկացած հարցերի վերաբերյալ:

**Հոդված 72**

Իսլամական խորհրդատվական խորհուրդը՝ Մեջլիսը չի կարող երկրի պետական կրոնի սկզբունքներին և կանոններին կամ Սահմանադրությանը հակասող օրենքներ ընդունել: 96-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրության պահապանների խորհրդի պարտավորությունն է որոշել, արդյոք խախտում տեղի ունեցե՞լ է, թե՞ ոչ:

**Հոդված 73**

Իսլամական խորհրդատվական խորհուրդն իրավունք ունի մեկնաբանել սովորական օրենքները: Սույն հոդվածի դրույթները չեն խոչընդոտում դատավորներին մեկնաբանել օրենքներն արդարադատության շրջանակներում:

**Հոդված 74**

Նախարարների խորհրդի հավանությանն արժանանալուց հետո կառավարության օրինագծերը ներկայացվում են Իսլամական խորհրդատվական խորհրդին: Օրինագծերը կարող են դիտարկվել Մեջլիսում առնվազն տասնհինգ պատգամավորների առաջարկության դեպքում:

**Հոդված 75**

Պետական եկամուտների կրճատմանը կամ ծախսերի աճին հանգեցնող օրինագծերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ պատգամավորների առաջարկություններն ու փոփոխությունները կարող են ներկայացվել Մեջլիս քննարկման համար, եթե եկամուտների կրճատման փոխհատուցման կամ նոր ծախսերի ապահովման ուղիները նույնպես նախատեսված են:

**Հոդված 76**

Մեջլիսն իրավունք ունի դիտարկել և հետաքննել երկրի բոլոր հարցերը:

**Հոդված 77**

Պայմանագրերը, արձանագրությունները, համաձայնագրերը և այլ միջազգային փաստաթղթերը պետք է հաստատվեն Իսլամական խորհրդատվական խորհրդի կողմից:

**Հոդված 78**
Երկրի սահմանների ցանկացած վերանայում արգելված է՝ բացառությամբ աննշան փոփոխությունների, որոնք պայմանավորված են երկրի շահերով և կատարվում են այն պայմանով, որ միակողմանի չեն, վնաս չեն հասցնում երկրի անկախությանն ու տարածքային ամբողջականությանը և դրանց կողմ է քվեարկում Մեջլիսի պատգամավորների ընդհանուր թվի չորս հինգերորդը:

**Հոդված 79**
Արգելվում է հայտարարել ռազմական դրություն: Պատերազմի կամ նման արտակարգ իրավիճակների դեպքում կառավարությունն իրավունք ունի Մեջլիսի համաձայնությամբ ժամանակավոր որոշ սահմանափակումներ կիրառել: Նման սահմանափակումները կարող են կիրառվել երեսուն օրից ոչ ավել, եթե սույն ժամկետը լրանալուց հետո, վերոնշյալ սահմանափակումների կիրառման համար հիմք հանդիսացած հանգամանքները շարունակում են գոյություն ունենալ, ապա կառավարությունը պարտավոր է Մեջլիս դիմել՝ դրանք կրկին կիրառելու նպատակով:

**Հոդված 80**
Մեջլիսի համաձայնությամբ կառավարությունը կարող է երկրի սահմաններում կամ սահմաններից դուրս վարկեր կամ դրամաշնորհներ ստանալ և տրամադրել:

**Հոդված 81**
Կտրականապես արգելվում է կոնցեսիաներ տրամադրել օտարերկրացիներին՝ առևտրի, արդյունաբերության, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության և այլ ծառայությունների ոլորտներում ընկերություններ կամ կազմակերպություններ հիմնելու համար:

**Հոդված 82**
Կառավարությունն իրավունք չունի աշխատանքի ընդունել օտարերկրացի փորձագետների՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա իսկապես անհրաժեշտ է և Մեջլիսը դրան հավանություն է տալիս:

**Հոդված 83**
Ազգային ժառանգության մաս համարվող կառավարության շենքերը և սեփականությունը չեն կարող փոխանցվել այլ անձանց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Մեջլիսը հաստատում է այդ որոշումը և եթե դրանք եզակի հուշարձաններ չեն:

**Հոդված 84**
Յուրաքանչյուր պատգամավոր պատասխանատվություն է կրում ամբողջ ժողովրդի առջև և իրավունք ունի արտահայտել իր տեսակետը երկրի ներքին և արտաքին քաղաքականության բոլոր խնդիրների վերաբերյալ:

**Հոդված 85**
Պատգամավորական մանդատը պատկանում է մեկ որոշակի անձի և չի կարող փոխանցվել այլ անձանց: Մեջլիսը չի կարող օրենսդրական լիազորություններ փոխանցել որևէ անձի կամ խմբի: Սակայն անհրաժեշտության դեպքում, 72-րդ հոդվածի համաձայն, Մեջլիսը կարող է որոշ օրենքների մշակումը հանձնարարել իր հանձնաժողովներին: Նման դեպքերում այդ օրենքներն

իրականացվելու են փորձնական կարգով Մեջլիսի կողմից սահմանված ժամանակահատվածում, այնուհետև Մեջլիսը վերջնական հաստատման որոշում է կայացնելու դրանց վերաբերյալ: 72-րդ հոդվածի համաձայն՝ Մեջլիսը նաև կարող է կառավարական կամ կառավարությանն առընթեր գործող կազմակերպությունների, ընկերությունների, հաստատությունների կանոնադրությունների վերաբերյալ վերջնական հաստատման որոշում կայացնելու գործառույթները փոխանցել համապատասխան հանձնաժողովներին կամ կառավարությանը: Նման դեպքերում կառավարության որոշումները չպետք է հակասեն երկրի պետական կրոնի սկզբունքներին և այաթներին կամ Սահմանադրությանը, որի վերաբերյալ որոշում է կայացնում Սահմանադրության պահապանների խորհուրդը 93-րդ հոդվածի համաձայն: Բացի այդ, կառավարության այս որոշումները չպետք է հակասեն երկրի ընդհանուր օրենքներին և կանոններին. հաստատելու համար, որ այդ որոշումները չեն հակասում վերոնշյալ օրենքներին և կանոններին՝ կիրառման համար հրապարակելիս, դրանք պետք է ներկայացվեն նաև Մեջլիսի Նախագահին:

**Հոդված 86**

Մեջլիսի պատգամավորներն ազատ են արտահայտել իրենց հայացքները և քվեարկել՝ որպես ներկայացուցիչներ իրենց պարտավորություններն իրականացելիս, և նրանց նկատմամբ չի կարող իրականացվել հետապնդում կամ նրանք չեն կարող կալանավորվել իրենց պատգամավորական պարտավորություններն իրականացնելիս՝ Մեջլիսում իրենց արտահայտած հայացքների և քվեարկության համար:

**Հոդված 87**

Նախարարների խորհրդի ձևավորումից հետո, մինչ խորհրդի աշխատանքները սկսելը, Նախագահը պետք է Մեջլիսում վստահության քվե ստանա: Իր պաշտոնավարման ընթացքում Նախագահը կարող է Մեջլիս դիմել՝ կարևոր և հակասական հարցերի վերաբերյալ Նախարարների խորհրդի համար վստահության քվե ստանալու նպատակով:

**Հոդված 88**

Յուրաքանչյուր անգամ, երբ Մեջլիսի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը հարցեր է առաջադրում Նախագահին կամ պատգամավորներից որևէ մեկը հարցեր է առաջադրում որևէ նախարարի՝ վերջիններիս պարտավորությունների վերաբերյալ, Նախագահը կամ նախարարը պարտավոր են ներկայանալ Մեջլիս և պատասխանել այդ հարցերին: Նախագահը պետք է իրեն առաջադրված հարցերին պատասխանի մեկ ամսվա, իսկ նախարարը՝ տաս օրվա ընթացքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Նախագահը կամ նախարարը հետաձգում են հարցերին պատասխանելը և Մեջլիսը դա հարգելի է համարում:

**Հոդված 89**

1.Անհրաժեշտության դեպքում Իսլամական խորհրդատվական խորհրդի պատգամավորները կարող են հարցում ուղարկել Նախարարների խորհրդին կամ առանձին նախարարի: Հարցումը կարող է դիտարկման ներկայացվել, եթե այն ստորագրվել է առնվազն տաս պատգամավորի կողմից: Նախարարների խորհուրդը կամ այն նախարարը, ում հարցում է ուղարկվել, պետք է ներկայանա Մեջլիս հարցումը ներկայացնելուց հետո տաս օրվա ընթացքում՝ հարցմանը պատասխանելու և վստահության քվե ստանալու համար: Եթե Նախարարների խորհուրդը կամ նախարարը, որին հարցում է ուղարկվել, չեն ներկայանում Մեջլիս, հարցումը ստորագրած պատգամավորները պետք է իրենց պարզաբանումները ներկայացնեն այդ հարցի վերաբերյալ, և Մեջլիսը, եթե հարկ է համարում, հայտարարում է անվստահության քվեի մասին: Եթե Մեջլիսը

վստահության քվեի մասին հայտարարություն չի անում, ապա Նախարարների խորհուրդը լուծարվում է կամ համապատասխան նախարարը հեռացվում է իր զբաղեցրած պաշտոնից: Երկու դեպքում էլ այն նախարարները, որոնց վերաբերյալ հարցում է ներկայացվել չեն կարող դառնալ անմիջապես ներկա խորհրդի հրաժարականից հետո ձևավորվող Նախարարների խորհրդի անդամ:

2. Եթե Մեջլիսի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը հարցում է ներկայացնում Նախագահին՝ վերջինիս կողմից գործադիր իշխանության իրականացման և երկրի կառավարման վերաբերյալ, հարցումը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Նախագահը պարտավոր է Մեջլիս ներկայանալ և սպառիչ բացատրություն տալ քննարկվող հարցերի վերաբերյալ: Եթե ընդդիմադիրների և կողմնակիցների հայտարարություններից, ինչպես նաև Նախագահի պատասխանից հետո, Մեջլիսի պատգամավորների ընդհանուր թվի երկու երրորդը կողմ է քվեարկում անվստահության քվեին, ապա այդ մասին հաղորդվում է երկրի Առաջնորդին՝ Սահմանադրության 110-րդ հոդվածի 10-րդ կետի կիրառման համար:

**Հոդված 90**

Ցանկացած անձ կարող է գրավոր բողոք ներկայացնել Մեջլիս՝ Մեջլիսի աշխատանքի, գործադիր կամ դատական իշխանության իրականացման վերաբերյալ: Մեջլիսը պարտավոր է դիտարկել այդ բողոքը և բավարար պատասխան տալ: Եթե բողոքը վերաբերում է գործադիր կամ դատական իշխանությանը, ապա Մեջլիսը պարտավոր է պահանջել լիարժեք հետաքննություն իրականացնել, ինչպես նաև Մեջլիսը պետք է սպառիչ բացատրություն պահանջի այդ իշխանության ներկայացուցիչներից և սահմանված ժամկետներում հայտարարի արդյունքների մասին: Եթե բողոքը վերաբերում է հանրային շահերին, ապա պատասխանը պետք է հրապարակվի:

**Հոդված 91**

Իսլամի և Սահմանադրության կանոնների պահպանման նպատակով՝ Մեջլիսի կողմից ընդունված օրենսդրության և իսլամի միջև հակասությունների բացահայտման համար ստեղծվում է Սահմանադրության պահապանների խորհուրդ հետևյալ կազմով՝

1. երկրի խնդիրներից տեղյակ վեց ֆիկհ՝ կրոնագետ-իրավագետներ ընտրվում են երկրի Առաջնորդի կողմից, և
2. իրավունքի տարբեր ոլորտներում մասնագիտացած վեց մահմեդական իրավաբաններ, որոնց ներկայացնում է դատական իշխանության ղեկավարը, իսկ ընտրում է Իսլամական խորհրդատվական խորհուրդը:

**Հոդված 92**

Սահմանադրության պահապանների խորհրդի անդամներն ընտրվում են վեց տարի ժամկետով, բայց առաջին ժամկետի ընթացքում, երեք տարի անց, խաղարկման միջոցով փոխվում է յուրաքանչյուր խմբի կեսը, որոնց տեղը զբաղեցնում են նոր անդամներ:

**Հոդված 93**

Առանց Սահմանադրության պահապանների խորհրդի Մեջլիսի որոշումներն իրավական ուժ չունեն՝ բացառությամբ պատգամավորների մանդատների հաստատման և Սահմանադրության պահապանների խորհրդի վեց կրոնագետ-իրավագետների ընտրության դեպքերի:

**Հոդված 94**

Մեջլիսի կողմից ընդունված բոլոր որոշումները և իրավական ակտերը պետք է ուղարկվեն Սահմանադրության պահապանների խորհուրդ: Սահմանադրության պահապանների խորհուրդը

պարտավոր է վերանայել որոշումներն ու իրավական ակտերը դրանք ստանալուց հետո առավելագույնը տաս օրվա ընթացքում՝ ապահովելու համար դրանց համապատասխանությունը իսլամական նորմերին և Սահմանադրությանը: Հակասությունների հայտնաբերման դեպքում Սահմանադրության պահապանների խորհուրդը տվյալ փաստաթուղթն ուղարկում է Մեջլիս վերանայման համար: Հակառակ դեպքում Մեջլիսի կողմից ընդունված որոշումն ուժի մեջ է մտնում:

**Հոդված 95**

Եթե Սահմանադրության պահապանների խորհուրդը տասօրյա ժամկետը բավարար չի համարում Մեջլիսի որոշումների և իրավական ակտերի վերանայման և վերջնական որոշում կայացնելու համար, ապա խորհուրդը կարող է դիմել Մեջլիսին՝ փաստաթղթերի վերանայման համար անհրաժեշտ ժամկետը առավելագույնը տաս օրով երկարացնելու պահանջով:

**Հոդված 96**

Մեջլիսի կողմից ընդունված որոշումների և իրավական ակտերի համապատասխանությունը իսլամական նորմերին որոշվում է Սահմանադրության պահապանների խորհրդի ֆիկհների ձայների մեծամասնությամբ, իսկ վերոնշյալ փաստաթղթերի համապատասխանությունը սույն Սահմանադրությանը որոշվում է Սահմանադրության խորհրդի պահապանների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

**Հոդված 97**

Աշխատանքներն արագացնելու նպատակով Սահմանադրության պահապանների խորհրդի անդամները կարող են ներկա գտնվել Մեջլիսում օրինագծի քննարկմանը կամ նոր օրենքի ներկայացմանը: Եթե Մեջլիսի օրակարգում հրատապ օրինագիծ կամ նոր օրենք է ներկայացված, ապա Սահմանադրության պահապանների խորհրդի անդամները պետք է ներկա գտնվեն Մեջլիսում և արտահայտեն իրենց կարծիքը:

**Հոդված 98**

Սահմանադրության պահապանների խորհրդի անդամների ընդհանուր թվի երեք չորրորդի որոշմամբ՝ Սահմանադրության պահապանների խորհուրդը կարող է մեկնաբանություններ ներկայացնել Սահմանադրության վերաբերյալ:

**Հոդված 99**

Սահմանադրության պահապանների խորհուրդը պարտավոր է իրականացնել երկրի Առաջնորդի ընտրությունների համար պատասխանատու Փորձագետների խորհրդի, Նախագահի, Իսլամական խորհրդատվական խորհրդի ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների և այն իրավիճակների վերահսկումը, երբ ստեղծվում է հանրության կարծիքին դիմելու անհրաժեշտություն:

## Գլուխ 7
## Խորհուրդներ

**Հոդված 100**

Սոցիալական, տնտեսական, առողջապահական, մշակութային, կրթական և զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումն արագացնելու, ինչպես նաև բնակչության բարեկեցության հետ կապված այլ նախագծերի իրականացումը դյուրացնելու նպատակով, համագործակցելով բնակչության հետ, հաշվի առնելով տեղական կարիքները՝ յուրաքանչյուր գյուղում, շրջանում, քաղաքում, մարզում, նահանգում գործերի կառավարման և հսկողության նկատմամբ

իրականացվում է վերահսկողություն համապատասխանաբար Գյուղի, Շրջանի, Քաղաքի, Մարզի, Նահանգի խորհուրդների կողմից: Վերոնշյալ խորհուրդների անդամներն ընտրվում են համապատասխան տարածքների բնակչության կողմից: Պահանջները, որոնց պետք է համապատասխանեն ընտրողները և սույն խորհուրդների թեկնածուները, ինչպես նաև նրանց գործառույթները և իրավասությունները, ընտրությունների անցկացման կարգը, այդ խորհուրդների իրավասությունը և հիերարխիան սահմանվում են օրենքով՝ առաջնորդվելով ազգային միասնության, տարածքային ամբողջականության, Իսլամական Հանրապետության համակարգի, ինչպես նաև կենտրոնական կառավարության իշխանության պահպանման սկզբունքներով:

**Հոդված 101**
Նահանգների զարգացմանը և բարեկեցությանն ուղղված ծրագրերի իրականացման ժամանակ խտրականությունը կանխելու, բնակչության հետ համագործակցելու և նման ծրագրերի համակարգված իրականացման վերահսկումը կազմակերպելու համար՝ Նահանգային խորհուրդների ներկայացուցիչները ձևավորում են Նահանգների բարձրագույն խորհուրդ: Սույն խորհրդի ձևավորման կարգը, ինչպես նաև վերջինիս գործառույթները սահմանվում են օրենքով:

**Հոդված 102**
Նահանգների բարձրագույն խորհուրդն իրավունք ունի, իր իրավասության շրջանակներում, նախագծել օրինագծեր և անմիջականորեն կամ կառավարության միջոցով ներկայացնել դրանք Մեջլիսին: Սույն նախագծերը դիտարկվում են Մեջլիսի կողմից:

**Հոդված 103**
Կառավարության կողմից նշանակված նահանգապետերը, քաղաքների, շրջանների և այլ տեղական կառավարիչները պարտավոր են պահպանել խորհուրդների կողմից իրենց իրավասությունների շրջանակներում ընդունված որոշումները:

**Հոդված 104**
Իսլամական արդարության, ծրագրերի նախապատրաստման գործընթացում համագործակցության, արդյունաբերական և գյուղատնտեսական բոլոր ձեռնարկությունների համակարգված առաջընթացն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհուրդներ, որոցում ներգրավվում են աշխատողների, գյուղացիների, այլ աշխատակիցների ներկայացուցիչները, ինչպես նաև մենեջերներ, իսկ կրթական, վարչական և սպասարկման այլ ոլորտներում ձևավորվում են վերոնշյալ ոլորտների աշխատակիցների ներկայացուցիչներից բաղկացած խորհուրդներ: Սույն խորհուրդների ձևավորման կարգը, ինչպես նաև դրանց գործառույթների և իրավասությունների շրջանակը սահմանվում է օրենքով:

**Հոդված 105**
Խորհուրդների կողմից ընդունված որոշումները չպետք է հակասեն իսլամական նորմերին և երկրի օրենքներին:

**Հոդված 106**
Խորհուրդները չեն կարող լուծարվել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք շեղվում են օրենքով սահմանված իրենց պարտավորություններից: Խորհուրդների կողմից իրենց պարտավորություններից շեղվելու մասին որոշում կայացնող մարմինը, ինչպես նաև այդ խորհուրդների լուծարման և վերակազմավորման կարգը սահմանվում է օրենքով: Եթե խորհուրդը

համաձայն չէ լուծարման մասին որոշման հետ, ապա այն իրավունք ունի բողոք ներկայացնել համապատասխան դատարան, որը պարտավոր է քննել այդ բողոքը արտահերթ կարգով:

## Գլուխ 8
## Պետության Առաջնորդը կամ Կառավարման խորհուրդը

**Հոդված 107**

Իսլամական հեղափոխության գերագույն հոգևոր Առաջնորդ և Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր այաթոլա Խամենեի մահից հետո, որը ժողովրդի բացարձակ մեծամասնությամբ ճանաչվել էր երկրի Առաջնորդ և «մարջա-թագլիդ» /մարդ, որով բոլորը հիացել են/, երկրի Առաջնորդը նշանակվում է ժողովրդի կողմից ընտրված փորձագետների կողմից: Այս փորձագետները քննարկումներ են անցկացնում 5-րդ և 109-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխանող բոլոր ֆիկհների թեկնածության վերաբերյալ: Եթե նրանք պարզում են, որ թեկնածուներից որևէ մեկն առավել տեղեկացված է իսլամի օրենքներից և կանոններից, իսլամական իրավունքից կամ քաղաքական և սոցիալական հարցերից, կամ այդ թեկնածուն ճանաչված է ժողովրդի կողմից 109-րդ հոդվածում սահմանված պահանջներին համապատասխանելու պատճառով, նրանք ընտրում են տվյալ թեկնածուին որպես երկրի Առաջնորդ: Վերոնշյալ առավելությունների բացակայության դեպքում փորձագետներն ընտրում են թեկնածուներից որևէ մեկին որպես երկրի Առաջնորդ: Փորձագետների խորհրդի կողմից ընտրված Առաջնորդը համարվում է երկրի գերագույն հոգևոր Առաջնորդ և ստանձնում է դրա հետ անմիջականորեն կապված բոլոր պարտավորությունները: Երկրի Առաջնորդը և ժողովուրդը հավասար են օրենքի առջև:

**Հոդված 108**

Փորձագետների քանակը և նրանց առաջադրվող պահանջները (ինչպես նշվում էր նախորդ հոդվածում), նրանց ընտրության կարգը, ինչպես նաև առաջին գումարման նիստերի անցկացման ներքին կանոնակարգը սահմանող օրենքը մշակվում է Սահմանադրության պահապանների խորհրդի ֆիկհների կողմից, ընդունվում է ձայների մեծամասնությամբ և վերջնական հաստատվում երկրի Առաջնորդի կողմից: Դրանից հետո սույն օրենքի ցանկացած փոփոխությունը կամ դրա վերանայումը, փորձագետների պարտավորությունների վերաբերյալ բոլոր դրույթների հաստատումը գտնվում է նրանց իրավասության ներքո:

**Հոդված 109**

Առաջնորդին առաջադրվող պահանջներն ու պայմաններն են՝

1. անհրաժեշտ գիտական աստիճան՝ իսլամական իրավունքի տարբեր ոլորտներում մուֆտիի (մահմեդական բարձրաստիճան հոգևորական իրավաբան-կրոնագետ և Ղուրանի մեկնաբան) գործառույթներ իրականացնելու համար; արդարություն և բարեպաշտություն իսլամական ազգին առաջնորդելու համար;
2. քաղաքական և սոցիալական ճիշտ աշխարհայացք, խոհեմություն, քաջություն, կազմակերպչական հմտություններ և կառավարման համար անհրաժեշտ կարողություններ
3. Եթե շատ են վերոնշյալ պահանջներին համապատասխան անձինք, ապա նախընտրությունը տրվում է իրավագիտական և քաղաքական հարցերում խորաթափանցությամբ առավել օժտված թեկնածուին:

**Հոդված 110**

Առաջնորդի իրավասություններն ու պարտավորություններն են՝

1. մշակել Իրանի Իսլամական Հանրապետության ընդհանուր քաղաքականությունը՝ Նպատակահարմարության խորհրդի հետ խորհրդակցելուց հետո;
2. վերահսկել պետության ընդհանուր քաղաքականության ճշգրիտ իրականացումը;
3. ընդունել որոշումներ հանրաքվեի անցկացման մասին;
4. իրականացնել զինված ուժերի ղեկավարումը;
5. կատարել հայտարարություններ պատերազմի, խաղաղության և զորահավաքի մասին;
6. նշանակել, ազատել հետևյալ անձանց, ինչպես նաև ընդունել վերջիններիս հրաժարականները՝

ա. Սահմանադրության պահապանների խորհրդի ֆիկիներ;
բ. դատական իշխանության մարմինների ղեկավար;
գ. Իրանի Իսլամական Հանրապետության ռադիոհեռուստատեսային հեռարձակման համակարգի ղեկավար
դ. Միացյալ շտաբի ղեկավար
ե. Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի գլխավոր հրամանատար
զ. զինված ուժերի գլխավոր հրամանատար

7. կարգավորել զինված ուժերի երեք զորքերի միջև վեճերը և կանոնակարգել նրանց հարաբերությունները;
8. Նպատակահարմարության խորհրդի օգնությամբ կարգավորել այն խնդիրները, որոնց լուծման համար այլ մեթոդներ են հարկավոր;
9. ստորագրել Նախագահի նշանակման մասին հրամանը, որն ընտրվել է ժողովրդի կողմից: Թեկնածուների համապատասխանությունը Հանրապետության նախագահի պաշտոնին, ինչը պայմանավորված է նրանց՝ Սահմանադրությամբ սահմանվող պահանջներին համապատասխանությամբ, պետք է հաստատվի մինչ ընտրությունները Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից, իսկ /նախագահության/ առաջին ժամկետում՝ Առաջնորդի կողմից:
10. երկրի շահերից ելնելով՝ հեռացնել Հանրապետության Նախագահին իշխանությունից՝ Գերագույն դատարանի նախագահի կողմից՝ Սահմանադրությամբ ամրագրված Նախագահի պարտականությունների խախտման վերաբերյալ որոշում կայացնելուց կամ Մեջլիսի՝ սույն Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահի՝ այդ պաշտոնին անհամապատասխան լինելու որոշումից հետո;
11. հայտարարել համաներում դատապարտյալների նկատմամբ կամ մեղմացնել վերջիններիս պատիժը՝ իսլամական նորմերի շրջանակներում, դատական իշխանության ղեկավարի առաջարկությամբ: Երկրի Առաջնորդը կարող է իր որոշ պարտավորությունները և իրավասությունները հանձնարարել մեկ այլ անձի:

**Հոդված 111**

Եթե Առաջնորդն ի վիճակի չէ կատարել Սահմանադրությամբ ամրագրված իր պարտավորությունները կամ այլևս չի համապատասխանում 5-րդ և 109-րդ հոդվածներում նշված պահանջներից որևէ մեկին կամ եթե բացահայտվում է, որ նա ի սկզբանե չի համապատասխանել սահմանված պահանջներին, նա ազատվում է իր զբաղեցրած պաշտոնից: Սույն հարցի վերաբերյալ որոշում կայացնում են փորձագետները՝ համաձայն 108-րդ հոդվածի: Առաջնորդի մահվան, հրաժարականի կամ իշխանությունից նրան հեռացնելու դեպքում փորձագետները պարտավոր են հնարավորինս շուտ նոր թեկնածու ընտրել և նշանակել Առաջնորդի պաշտոնին: Մինչ նոր Առաջնորդի նշանակումը՝ Նպատակահարմարության խորհրդի որոշմամբ երկրի Առաջնորդի բոլոր պարտավորությունները ժամանակավորապես պետք է իրականացնի խորհուրդը, որի կազմում ընդգրկվում են Նախագահը, դատական իշխանության ղեկավարը և Սահմանադրության

պահապանների խորհրդի ֆիկհներից որևէ մեկը: Եթե այս ընթացքում վերոնշյալ անձանցից որևէ մեկն ի վիճակի չի լինի որևէ պատճառով կատարել իր պարտավորությունները, նրա փոխարեն Նպատակահարմարության խորհրդի ընտրությամբ ֆիկհների մեծամասնության որոշմամբ այլ անձ կնշանակվի:
Սույն խորհուրդը կարող է իրականացնել 110-րդ հոդվածի 1, 3, 5 և 10-րդ կետերով և 6-րդ մասի «դ», «ե» և «զ» կետերով նախատեսված գործառույթները՝ Նպատակահարմարության խորհրդի անդամների ընդհանուր թվի երեք քառորդի ձայների որոշմամբ: Եթե հիվանդության կամ այլ պատահարի պատճառով Առաջնորդը ժամանակավորապես չի կարող իրականացնել իր պարտավորությունները, ապա այդ ընթացքում նրան փոխարինում է սույն հոդվածում նշված խորհուրդը:

**Հոդված 112**
Երկրի Առաջնորդի կարգադրությամբ՝ Նպատակահարմարության խորհուրդը ժողով է գումարում, եթե Սահմանադրության պահապանների խորհուրդը հայտարարում է, որ Մեջլիսի առաջարկած օրինագիծը հակասում է Շարիաթի կամ Սահմանադրության նորմերին, իսկ Մեջլիսը համաձայն չէ Սահմանադրության պահապանների խորհրդի որոշման հետ: Խորհուրդը նաև ժողով է գումարում՝ քննարկելու Առաջնորդի կողմից իրեն ներկայացված հարցերը, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ իրականացնելու համար: Խորհրդի մշտական և ժամանակավոր անդամները նշանակվում են երկրի Առաջնորդի կողմից: Խորհրդի կանոնադրությունը մշակվում և ընդունվում է խորհրդի անդամների կողմից, այնուհետև հաստատվում Առաջնորդի կողմից:

## Գլուխ 9
## Գործադիր իշխանություն
### 9.1 Նախագահը

**Հոդված 113**
Երկրի Առաջնորդից հետո Նախագահն ամենաբարձր պաշտոնյան է: Նա պատասխանատու է Սահմանադրության իրականացման համար և իրականացնում է գործադիր իշխանությունը՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք անմիջականորեն կապված են Առաջնորդի կողմից երկրի կառավարման հետ:

**Հոդված 114**
Նախագահն ընտրվում է չորս տարի ժամկետով՝ ժողովրդի ուղղակի քվեարկությամբ: Հաջորդ անգամ նա կարող է վերընտրվել միայն մեկ անգամ:

**Հոդված 115**
Նախագահը պետք է ընտրվի կրոնական և քաղաքական գործիչներից, որոնք համապատասխանում են հետևյալ պահանջներին՝ իրանական ծագում, Իրանի քաղաքացիություն, կառավարման և կազմակերպչական հմտություններ, լավ կենսագրություն, վստահելիություն և աստվածավախություն, հավատքն առ Իրանի Իսլամական Հանրապետություն և պետական կրոնի հիմնարար սկզբունքներ:

**Հոդված 116**
Նախագահի պաշտոնի համար առաջադրված թեկնածուները պետք է պաշտոնապես ներկայացնեն իրենց թեկնածությունը: Նախագահի ընտրության կարգը սահմանվում է օրենքով:

**Հոդված 117**

Նախագահն ընտրվում է ընտրողների ձայների բացարձակ մեծամասնությամբ: Բայց եթե թեկնածուներից ոչ մեկ չի ստանում մեծամասնության ձայներն առաջին փուլում, հաջորդ շաբաթ ուրբաթ օրը անցկացվում է վերաքվեարկություն: Ընտրությունների երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում առավել շատ ձայներ ստացած միայն երկու թեկնածուները: Այնուամենայնիվ, եթե ընտրությունների առաջին փուլում առավել շատ ձայներ ստացած թեկնածուները հրաժարվում են մասնակցել երկրորդ փուլին, ապա նրանց փոխարեն մասնակցում են ընտրությունների առաջին փուլում մնացած թեկնածուների համեմատ առավել շատ ձայներ ստացած երկու թեկնածուները:

**Հոդված 118**

99-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահի ընտրությունների վերահսկումն իրականացնում է Սահմանադրության պահապանների խորհուրդը: Սակայն մինչ Սահմանադրության պահապանների առաջին խորհրդի ձևավորումը՝ սույն գործառույթն իրականացնում է օրենքով սահմանվող վերահսկող մարմինը:

**Հոդված 119**

Նոր Նախագահի ընտրությունները պետք է անցկացվեն գործող Նախագահի լիազորությունների ավարտից առավելագույնը մեկ ամիս առաջ: Նոր Նախագահի ընտրությունից առաջ և գործող Նախագահի լիազորությունների ավարտից հետո ընկած ժամանակահատվածում գործող Նախագահը դեռևս իրականացնում է սահմանված գործառույթները:

**Հոդված 120**

Եթե ընտրություններից տաս օր առաջ մահանում է թեկնածուներից մեկը, որը համապատասխանում էր վերոնշյալ պահանջներին և իրավունք ուներ մասնակցել ընտրություններին, ապա ընտրությունները հետաձգվում են երկու շաբաթով: Եթե ընտրությունների առաջին և երկրորդ փուլերի միջև ընկած ժամանկահատվածում մահանում է առավել շատ ձայներ ստացած թեկնածուն, ապա ընտրությունները (երկրորդ փուլը) հետաձգվում են երկու շաբաթով:

**Հոդված 121**

Իսլամական խորհրդատվական խորհրդի նիստի ժամանակ դատական իշխանության ղեկավարի և Սահմանադրության պահապանների խորհրդի անդամների ներկայությամբ՝ Նախագահը կարդում է երդման ստորև ներկայացված տեքստը և ստորագրում այն.

*Հանուն Ողորմած, Գթասիրտ Աստծո: Որպես Նախագահ, Սուրբ Ղուրանով, ժողովրդի առջև երդվում եմ Բարձրյալ և Ամենակարող Աստծո անունով, որ լինելու եմ պետական կրոնի, Իսլամական Հանրապետության համակարգի և երկրի Սահմանադրության պաշտպանը, օգտագործելու եմ իմ բոլոր ունակություններն ու կարողությունները իմ ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով, նվիրելու եմ ինձ իմ ազգին, երկրին ծառայելուն, կրոնի և բարոյականության քարոզմանը, ճշմարտության և արդարության ապահովմանը, խուսափելու եմ ցանկացած կամայականության դրսևորումից, պաշտպանելու եմ քաղաքացիների ազատությունը և արժանապատվությունը և Սահմանադրությամբ սահմանված նրանց իրավունքները: Երդվում եմ, որ անելու եմ ամեն հնարավորը՝ երկրի սահմանները և քաղաքական, տնտեսական, մշակութային անկախությունը պաշտպանելու համար: Երդվում եմ, որ, ապավինելով Աստծուն և հետևելով Իսլամի մարգարեին և սուրբ իմամներին (թո՛ղ խաղաղությունը լինի նրանց հետ), որպես բարեպաշտ և նվիրված պաշտպան կատարելու եմ ժողովրդի կողմից ինձ*

*վստահված սրբազան պարտավորությունը՝ պահանելու եմ այս իշխանությունը և փոխանցելու եմ այն նրան, ում ժողովուրդը կընտրի ինձնից հետո:*

**Հոդված 122**
Նախագահը պատասխանատվություն է կրում ժողովրդի, Առաջնորդի և Իսլամական խորհրդատվական խորհրդի առջև՝ սույն Սահմանադրությամբ և այլ օրենքներով սահմանված իր պարտավորությունների և իրավասությունների շրջանակներում:

**Հոդված 123**
Նախագահը պարտավոր է ստորագրել Մեջլիսի կողմից հաստատված կամ հանրաքվեի միջոցով ընդունված որոշումները, երբ դրանք անցնում են օրենքով սահմանված ընթացակարգերը և ներկայացվում իրեն: Ստորագրելուց հետո նա պարտավոր է փոխանցել դրանք համապատասխան մարմիններին իրականացման համար:

**Հոդված 124**
Սահմանադրությամբ սահմանված իր պարտավորությունների իրականացման համար Նախագահը կարող է ունենալ տեղակալներ: Նախագահի համաձայնությամբ նրա առաջին տեղակալն իրականացնում է Նախարարների խորհրդի կառավարումը և համակարգում այլ տեղակալների աշխատանքը:

**Հոդված 125**
Նախագահը կամ նրա օրինական ներկայացուցիչը ստորագրում է Իրանի կառավարության՝ այլ երկրների կառավարությունների հետ կնքած պայմանագրերը, համաձայնագրերը, արձանագրությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների վերաբերյալ պայմանագրեր՝ Մեջլիսի կողմից դրանց վավերացումից հետո:

**Հոդված 126**
Նախագահը պատասխանատու է պլանավորման, բյուջեի, երկրի կառավարման համար և կարող է սույն գործառույթները հանձնարարել այլ անձանց:

**Հոդված 127**
Հատուկ դեպքերում Նախարարների խորհրդի համաձայնությամբ՝ Նախագահը կարող է նշանակել որոշակի լիազորություններ ունեցող մեկ կամ մի քանի ներկայացուցիչների: Նման դեպքերում այդ ներկայացուցչի (ներկայացուցիչների) որոշումները միևնույն օրինական ուժն ունեն, ինչ Նախագահի և Նախարարների խորհրդի կողմից ընդունված որոշումները:

**Հոդված 128**
Դեսպանները նշանակվում են Արտաքին գործերի նախարարի առաջարկությամբ և Նախագահի համաձայնությամբ: Նախագահը ստորագրում է դեսպանների հավատարմագրերը և ընդունում այլ երկրների դեսպանների հավատարմագրերը:

**Հոդված 129**
Պետական պարգևները հանձնում է Նախագահը:

**Հոդված 130**

Նախագահը ներկայացնում է իր հրաժարականն Առաջնորդին և շարունակում իրականացնել իր պարտավորությունները՝ մինչ հրաժարականի ընդունումը:

**Հոդված 131**

Նախագահի մահվան, պաշտոնից հեռացման, հրաժարականի, երկու ամսից ավել ժամկետով բացակայության կամ հիվանդության դեպքում կամ եթե Նախագահի պաշտոնավարման ժամկետը լրացել է, իսկ նոր Նախագահը չի ընտրվել մի շարք խնդիրների պատճառով կամ նման այլ հանգամանքների դեպքում, երկրի Առաջնորդի համաձայնությամբ, Նախագահի առաջին տեղակալը ստանձնում է Նախագահի լիազորությունները և գործառույթները: Խորհուրդը, որի կազմում ընդգրկված են Մեջլիսի Նախագահը, դատական իշխանության ղեկավարը և Նախագահի առաջին տեղակալը, պարտավոր է առավելագույնը հիսուն օրվա ընթացքում կազմակերպել նոր Նախագահի ընտրությունները: Նախագահի առաջին տեղակալի մահվան կամ այլ դեպքերում, երբ որոշ խնդիրների պատճառով նա չի կարողանում իրականացնել իր պարտավորությունները կամ երբ Նախագահը չունի առաջին տեղակալ, երկրի Առաջնորդը պարտավոր է նրա փոխարեն այլ անձի նշանակել:

**Հոդված 132**

Եթե, 131-րդ հոդվածի համաձայն, Նախագահի պարտավորություններն ու լիազորություններն իրականացվում են նրա առաջին տեղակալի կամ այլ անձի կողմից, ապա այդ ժամանակահատվածում արգելվում է նախարարներին հարցում կամ անվստահության քվե ներկայացնել: Նաև արգելվում է ձեռնարկել Սահմանադրության վերանայմանը կամ հանրաքվեի անցկացմանն ուղղված քայլեր:

## Գործադիր իշխանություն

## 9.2 Նախագահը և նախարարները

**Հոդված 133**

Նախարարները նշանակվում են Նախագահի կողմից և ներկայացվում են Մեջլիսում վստահության քվե ստանալու նպատակով: Մեջլիսի կազմի փոփոխման դեպքում նախարարները պարտավոր չեն նորից վստահության քվե ստանալ: Նախարարների թիվը և նրանց լիազորությունները սահմանվում են օրենքով:

**Հոդված 134**

Նախագահը ղեկավարում է Նախարարների խորհուրդը: Նա վերահսկում է նախարարների աշխատանքը և ձեռնարկում բոլոր անհրաժեշտ միջոցները կառավարության գործունեությունը համակարգելու նպատակով: Համագործակցելով նախարարների հետ՝ Նախագահը սահմանում է կառավարության ծրագրերը և գործունեության ուղղությունները, իրագործում է օրենքները: Տարաձայնությունների առկայության կամ կառավարական գործակալությունների օրենքով սահմանված պարտավորություններում միջամտությունների դեպքում՝ Նախագահի պահանջով Նախարարների խորհրդի կայացրած որոշումը պետք է իրականացվի, եթե դա չի պայմանավորում օրենքների մեկնաբանման կամ փոփոխման անհրաժեշտություն: Նախագահը պատասխանատու է Մեջլիսի առջև Նախարարների խորհրդի գործողությունների համար:

**Հոդված 135**

Նախարարները շարունակում են զբաղեցնել իրենց պաշտոնները մինչ իրենց զբաղեցրած պաշտոնից ազատվելը կամ Մեջլիսի կողմից անվստահության քվե ստանալը: Նախարարների խորհուրդը կամ նախարարներից յուրաքանչյուրը պետք է իր հրաժարականը ներկայացնի

Նախագահին. Նախարարների խորհուրդը շարունակում է իրականացնել իր գործառույթները մինչ նոր կառավարության նշանակումը: Նախագահը կարող է նախարարության ղեկավար նշանակել առավելագույնը երեք ամսով, եթե այդ նախարարությունում դեռևս նախարար նշանակված չէ:

**Հոդված 136**

Նախագահը կարող է ազատել նախարարներին իրենց զբաղեցրած պաշտոնից և այս դեպքում նա պետք է Մեջլիսից վստահության քվե ստանա նոր նախարարի (նախարարների) համար: Եթե Նախարարների խորհրդի անդամների կեսը փոխվում է Մեջլիսի կողմից կառավարության վստահության քվե ստանալուց հետո, կառավարությունը պետք է Մեջլիս դիմի նորից վստահության քվե ստանալու նպատակով:

**Հոդված 137**

Նախարարներից յուրաքանչյուրն իր իրականացրած պարտավորությունների համար հաշվետու է Նախագահի և Խորհրդի առջև, սակայն Նախարարների խորհրդի կողմից հաստատվող հարցերում յուրաքանչյուր նախարար պատասխանատվություն է կրում նաև մյուսների գործողությունների համար:

**Հոդված 138**

Բացի այն դեպքերից, երբ Նախարարների խորհուրդը կամ նախարարներից որևէ մեկը պարտավոր է մշակել օրենքների իրականացման ընթացակարգեր, Նախարարների խորհուրդն իրավունք ունի վարչական պարտավորությունների, օրենքների իրականացման, վարչական մարմինների ստեղծման նպատակով ընդունել նորմատիվ ակտեր, կանոնակարգեր և ընթացակարգեր: Նախարարներից յուրաքանչյուրը նաև իրավունք ունի, իր իրավասությունների շրջանակներում և Նախարարների խորհրդի որոշումների համաձայն, մշակել կանոնադրություններ և պատրաստել շրջաբերականներ: Այնուամենայնիվ, նման կանոնադրությունների բովանդակությունը չպետք է հակասի օրենքի տառին և ոգուն: Կառավարությունը կարող է իր պարտավորություններից մի քանիսը հանձնարարել մի շարք նախարարներից բաղկացած հանձնաժողովների: Օրենքի շրջանակներում նման հանձնաժողովների որոշումները Նախագահի կողմից հաստատվելուց հետո պետք է իրականացվեն: Կառավարության կանոնադրությունների և սույն հոդվածում նշված հանձնաժողովների որոշումները մինչ դրանց հրապարակումը պետք է ներկայացվեն Մեջլիսի Նախագահին, որպեսզի օրենքների հետ հակասություններ բացահայտելու դեպքում Մեջլիսն ուղարկի դրանք Նախարարների խորհրդին վերանայման նպատակով:

**Հոդված 139**

Հանրային և պետական սեփականության վերաբերյալ վեճերի կարագավորումը կամ դրանց փոխանցումը արբիտրաժային դատարան քննարկման համար կախված է Նախարարների խորհրդի որոշումից, իսկ այդ մասին հարկ է տեղեկացնել Մեջլիսին: Կարևոր ներպետական դատական գործերում, ինչպես նաև այն դեպքերում, երբ կողմերից մեկն օտարերկրյա անձ է, հարկ է ստանալ Մեջլիսի որոշման հաստատումը: Նման կարևոր գործերը սահմանվում են օրենքով:

**Հոդված 140**

Ընդհանուր բնույթի հանցագործություններ կատարելու համար Նախագահի, նրա տեղակալների և նախարարների դեմ ներկայացված մեղադրանքները քննվում են արդարադատության համակարգի ընդհանուր իրավասության դատարաններում՝ տեղեկացնելով այդ մասին Մեջլիսին:

**Հոդված 141**

Նախագահը, Նախագահի տեղակալները, նախարարները և կառավարության աշխատակիցները չեն կարող զբաղեցնել մեկից ավելի պաշտոն, նրանք չեն կարող նաև այլ պաշտոններ զբաղեցնել այն հաստատություններում, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է պետությանը կամ հասարակական հաստատություններին, նրանք չեն կարող լինել Մեջլիսի անդամ, ցանկացած մասնավոր ընկերության փաստաբան կամ իրավախորհրդատու, գործադիր տնօրեն, կամ տնօրենների խորհրդի անդամ՝ բացառությամբ կառավարության գերատեսչություններին և հաստատություններին կից գործող կոոպերատիվ ընկերությունների: Բացառություն են կազմում դասախոսների/ուսուցիչների հաստիքները համալսարաններում և հետազոտական ինստիտուտներում:

**Հոդված 142**
Երկրի Առաջնորդի, Նախագահի, Նախագահի տեղակալների, նախարարների, ինչպես նաև նրանց կանանց և երեխաների սեփականությունը ստուգվում է դատական իշխանության ղեկավարի կողմից՝ վերոնշյալ անձանց կողմից՝ համապատասխան պաշտոնները զբաղեցնելուց առաջ և հետո՝ համոզվելու համար, որ այդ սեփականությունը չի ավելացել անօրինական ճանապարհներով:

## Գործադիր իշխանություն
## 9.3 Բանակը և Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը

**Հոդված 143**
Իրանի Իսլամական Հանրապետության բանակը կոչված է պահպանել երկրի անկախությունը և տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև Իսլամական Հանրապետության համակարգը:

**Հոդված 144**
Իրանի Իսլամական Հանրապետության բանակը պետք է լինի իսլամական, այսինքն նվիրված լինի իսլամական գաղափարախոսությանը և ժողովրդին. բանակը ծառայության համար պետք է իր շարքեր ընդունի անձանց, որոնք նվիրված են Իսլամական հեղափոխության նպատակներին և պատրաստ են զոհաբերել իրենց հանուն այդ նպատակների:

**Հոդված 145**
Ոչ մի օտարերկրյա անձ չի կարող ծառայության անցնել բանակում կամ երկրի ներքին ուժերում:

**Հոդված 146**
Օտարերկրյա ռազմական բազաների հիմնումն Իրանում, նույնիսկ խաղաղ նպատակներով, արգելված է:

**Հոդված 147**
Խաղաղ ժամանակներում կառավարությունը պետք է օգտագործի բանակի անձնակազմը և տեխնիկան փրկարարական, կրթական, արդյունաբերական և շինարարական նպատակներով այնպես, որ դա վնաս չհասցնի բանակի մարտական պատրաստականությանը՝ պահպանելով իսլամական արդարության նորմերը:

**Հոդված 148**
Արգելվում է օգտագործել ռազմական տեխնիկան, ռազմական նշանակության սարքերը և այլ միջոցները, ինչպես նաև արգելվում է շահագործել բանակի անձնակազմի անդամներին որպես անձնական ծառայողներ և վարորդներ կամ օգտագործել նրանց այլ նպատակների համար:

**Հոդված 149**
Զինվորական կոչումներ շնորհելը և զինվորական կոչումներից զրկելն իրականացվում է օրենքի համաձայն:

**Հոդված 150**
Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը, որը ստեղծվել է Հեղափոխության հաղթանակի առաջին օրերին, պահպանվում է հեղափոխությունը և դրա ձեռքբերումները պաշտպանելու նպատակով: Կորպուսների պարտավորությունների ու պատասխանատվության շրջանակը՝ այլ զինված ուժերի պարտավորությունների և պատասխանատվության շրջանակի նկատմամբ սահմանվում է օրենքով, և առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում այդ ուժերի միջև եղբայրական համագործակցությանը և ներդաշնակությանը:

**Հոդված 151**
Համաձայն սուրբ Ղուրանի այաթի՝ կառավարությունը պարտավոր է, իսլամական նորմերի համաձայն, իր քաղաքացիների համար ստեղծել ռազմական ուսուցման ծրագիր և դրա համար անհրաժեշտ պայմանները, որպեսզի հնարավոր լինի բոլոր քաղաքացիներին ցանկացած ժամանակ հավաքագրել՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը պաշտպանելու նպատակով: Այնուամենայնիվ, զենք կրելու համար իրավասու մարմինների կողմից տրված թույլտվություն: է հարկավոր:

## Գլուխ 10
## Արտաքին քաղաքականություն

**Հոդված 152**
Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության հիմքում ընկած է ցանկացած գերիշխանության՝ թե՛ դրա դրսևորման, թե՛ ընդունման անընդունելիությունը, երկրի անկախության և տարածքային ամբողջականության լիարժեք պահպանումը, բոլոր մահմեդականների իրավունքների պաշտպանությունը, չեզոքության քաղաքականությունը հեգեմոնիստական գերտերությունների նկատմամբ և խաղաղ փոխհարաբերությունների պահպանումն այն պետությունների հետ, որոնք թշնամական հարաբերություններ չունեն Իրանի հետ:

**Հոդված 153**
Արգելվում է կնքել ցանկացած պայմանագիր, որի արդյունքում մեկ այլ երկրի տիրապետության ներքո կարող են հայտնվել երկրի ռեսուրսները, տնտեսությունը, բանակը կամ մշակույթը, ինչպես նաև պետության կյանքի այլ ասպեկտները:

**Հոդված 154**
Իրանի Իսլամական Հանրապետության հիմնանպատակը հասարակության մեջ անհատի երջանկության ապահովումն է. Իրանի Իսլամական Հանրապետությունը անկախությունը, ազատությունը, արդարության և ճշմարտության գերիշխանությունը դիտարկում է որպես աշխարհի բոլոր ազգերի իրավունքներ: Այդ պատճառով խստագույնս փորձելով խուսափել այլ երկրների ներքին գործերին ցանկացած կերպ միջամտելուց՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը ամբողջ աշխարհում աջակցում է ճնշվածներին պայքար մղել բռնակալների դեմ:

**Հոդված 155**

Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը կարող է քաղաքական ապաստան տրամադրել այն անձանց, որոնք դիմել են ապաստան ստանալու համար, եթե այդ անձինք չեն ճանաչվել դավաճաններ և դիվերսանտներ՝ համաձայն Իրանի օրենքների:

## Գլուխ 11
## Դատական իշխանություն

**Հոդված 156**

Դատական իշխանությունն անկախ իշխանություն է, որը պաշտպանում է անհատի և հասարակության իրավունքները, պատասխանատվություն է կրում արդարադատության իրականացման համար: Դատական իշխանության պարտավորություններն են՝

1. քննել իրավունքների խախտումների դեպքերը և բողոքները, վճիռ կայացնել դրանց վերաբերյալ, կարգավորել վեճերը և խնդիրները, ինչպես նաև ընդունել բոլոր անհրաժեշտ որոշումները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցները կտակի հետ կապված և օրենքով սահմանված այլ դեպքերում;
2. վերականգնել հանրության իրավունքները, նպաստել արդարության հաստատմանը և խրախուսել հիմնական ազատությունները;
3. վերահսկել օրենքների ճշգրիտ իրականացումը;
4. բացահայտել հանցագործություններ, հետապնդել և պատժել հանցագործներին, ի կատար ածել Իսլամական քրեական օրենսգրքով նախատեսված պատիժները;
5. անհրաժեշտ քայլեր ձեռնարկել հանցագործություններ կանխելու և հանցագործներին փոխելու նպատակով:

**Հոդված 157**

Դատական, վարչական և գործադիր ոլորտներում դատական իշխանության պարտավորությունների իրականացման նպատակով՝ երկրի Առաջնորդը հինգ տարի ժամկետով դատական իշխանության ղեկավար է նշանակում դատական գործերից իրազեկ, արդար և խոհեմ մուջթահիդի, որը դատական իշխանության գերագույն կրողն է:

**Հոդված 158**

Դատական իշխանության ղեկավարի պարտավորություններն են՝

1. ստեղծել 156-րդ հոդվածում սահմանված պարտավորությունների համաձայն արդարադատության իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառույց;
2. մշակել Իսլամական Հանրապետությանը համապատասխան օրինագծեր;
3. դատավորի պաշտոնում նշանակել արդար և արժանի անձանց, հեռացնել նրանց իրենց զբաղեցրած պաշտոնից, փոխել նրանց ծառայության վայրը կամ զբաղեցրած պաշտոնը, հանձնարարել հատուկ պարտավորություններ, ապահովել մասնագիտական առաջխաղացում, իրականացնել նման վարչական պարտավորություններ՝ օրենքի համաձայն:

**Հոդված 159**

Արդարադատության համակարգը ներկայացնում է այն պետական մարմինները, ուր ներկայացվում են տարաբնույթ բողոքներ: Դատարանների ստեղծումը և դրանց իրավասությունների շրջանակը սահմանվում է օրենքով:

**Հոդված 160**

Արդարադատության նախարարը պատասխանատվություն է կրում բոլոր հարցերի և խնդիրների համար, որոնք կապված են մի կողմից դատական իշխանության, մյուս կողմից գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև եղած հարաբերությունների հետ: Արդարադատության նախարարի պաշտոնի համար Նախագահն առաջարկում է մի շարք անձանց թեկնածություններ, որոնցից դատական իշխանության ղեկավարն ընտրում է Արդարադատության նախարարի: Դատական իշխանության ղեկավարը կարող է Արդարադատության նախարարին փոխանցել լիազորություններ ֆինանսական, վարչական հարցերի կանոնակարգման համար, ինչպես նաև կարող է փոխանցել (բացառությամբ դատավորների) անհրաժեշտ աշխատակիցների աշխատանքի ընդունելու իրավունքը, որի դեպքում Արդարադատության նախարարը, ունենալու է միևնույն պարտավորություններն ու իրավասությունները, ինչ գործադիր իշխանության բարձրաստիճան պաշտոնյաներ համարվող մյուս նախարարները:

**Հոդված 161**

Գերագույն դատարանը ստեղծվում է դատական իշխանության ղեկավարի կողմից հաստատված կանոնակարգերի հիման վրա՝ դատարանների կողմից օրենքների ճշգրիտ իրականացումը վերահսկելու, միասնական դատական պրակտիկա ապահովելու և օրենքով սահմանված այլ պարտավորություններ իրականացնելու նպատակով:

**Հոդված 162**

Գերագույն դատարանի նախագահը և գլխավոր դատախազը պետք է լինեն դատական գործերից լիովին իրազեկ արդար մուջթահիդներ: Դատական իշխանության ղեկավարը, Գերագույն դատարանի դատավորների հետ խորհրդակցելուց հետո, նշանակում է Գերագույն դատարանի նախագահին և գլխավոր դատախազին հինգ տարի ժամկետով:

**Հոդված 163**

Դատավորին առաջադրվող պահանջներն ու պայմանները սահմանվում են օրենքով՝ ֆիկհի նորմերի համաձայն:[4]

**Հոդված 164**

Դատավորը չի կարող ժամանակավոր կամ մշտապես հեռացվել իր զբաղեցրած պաշտոնից, առանց դատավարության կամ պաշտոնից իր հեռացման համար հիմք հանդիսացած հանցագործության կամ իրավախախտման մեջ իր մեղավորության ապացուցման: Դատավորի զբաղեցրած պաշտոնը կամ նրա ծառայության վայրը չի կարող փոփոխվել առանց նրա համաձայնության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա պայմանավորված է հանրության շահերով, որոշումը կայացվում է դատական իշխանության ղեկավարի կողմից Գերագույն դատարանի նախագահի և Գլխավոր դատախազի հետ խորհրդակցելուց հետ: Դատավորների ծառայության վայրի և պաշտոնների պարբերական բնույթ կրող փոփոխություններն իրականացվում են օրենքով սահմանված ընդհանուր կանոնակարգերի համաձայն:

**Հոդված 165**

Անցկացվում են բաց դատավարություններ, և դատավարություններին կարող են ներկա գտնվել բոլոր քաղաքացիներն առանց սահմանափակման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը որոշում է կայացնում, որ բաց դատավարությունը կարող է բացասաբար ազդել հասարակության բարոյականության կամ հասարակական կարգի վրա, կամ, եթե մասնավոր վեճի դեպքում երկու կողմերն էլ դեմ են լինում բաց դատավարությանը:

---

[4] https://www.constituteproject.org/constitution/Iran_1989.pdf?lang=en

**Հոդված 166**
Դատավորների վճիռները պետք է հիմնավորված լինեն և հիմնվեն այն օրենքների հոդվածների և սկզբունքների վրա, համաձայն որոնց կայացվում է վճիռը:

**Հոդված 167**
Դատավորը պարտավոր է փորձել յուրաքանչյուր գործի դեպքում վճիռ կայացնել ամրագրված օրենքների հիման վրա: Նման որևէ օրենքի բացակայության դեպքում դատավորը պետք է վճիռ կայացնի՝ հիմնվելով իսլամական իշխանական աղբյուրների կամ ընդունված ֆաթվաների վրա: Դատավորը չի կարող հրաժարվել գործերը վարույթ ընդունել, դրանք քննել և դրանց վերաբերյալ վճիռ կայացնել այն պատրվակով, որ այդ մասին օրենքը լռում է, կամ օրենքը հակիրճ է կամ հակասական:

**Հոդված 168**
Քաղաքական և մամուլի հետ կապված հանցագործությունների դեպքում անցկացվում են բաց դատավարություններ՝ երդվյալ ատենակալների մասնակցությամբ: Երդվյալ ատենակալների ընտրության կարգը, նրանց լիազորությունները և քաղաքական հանցագործությունների սահմանումը սահմանվում է օրենքով՝ համաձայն իսլամական նորմերի:

**Հոդված 169**
Ոչ մի գործողություն կամ անգործություն չի կարող հանցագործություն համարվել դրանից հետո ընդունված օրենքի հիման վրա:

**Հոդված 170**
Դատավորները պարտավոր են խուսափել իսլամի օրենքներին կամ նորմերին հակասող կամ գործադիր իշխանության լիազորությունների գերազանցմամբ ընդունված կառավարական կանոնադրություններ և կանոնակարգեր կիրառելուց: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմել Վարչական արդարադատության դատարան և պահանջել անվավեր ճանաչել ցանկացած նման իրավական ակտ:

**Հոդված 171**
Եթե որևէ գործում կամ դրա վերաբերյալ վճիռ կայացնելիս, կամ տվյալ գործում օրենք կիրառելիս՝ դատավորի մեղքով կամ նրա սխալի պատճառով որևէ անձ բարոյական կամ նյութական վնաս է կրում, ապա պարտավորությունները չկատարելու համար տվյալ դատավորը իսլամական նորմերի համաձայն պետք է փոխհատուցի անձի կրած վնասը: Հակառակ դեպքում այդ վնասը փոխհատուցում է կառավարությունը: Բոլոր նման դեպքերում անձի բարի համբավը և հեղինակությունը պետք է վերականգնվեն:

**Հոդված 172**
Բանակի, ժանդարմերիայի, ոստիկանության, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի անդամների ռազմական կամ անվտանգության ապահովման պարտավորությունների հետ կապված հանցագործությունները քննելու համար օրենքի համաձայն ստեղծվում են ռազմական դատարաններ: Այնուամենայնիվ, վերոնշյալ անձանց կողմից կատարված սովորական քրեական հանցագործությունները կամ արդարադատության համակարգում ծառայության ընթացքում կատարված հանցագործությունները դատավորները քննում են ընդհանուր իրավասության դատարաններում: Զինվորական դատախազությունը և ռազմական

դատարանները դատական իշխանության մասն են կազմում և պետք է առաջնորդվեն դատական իշխանությունը կանոնակարգող սկզբունքներով:

**Հոդված 173**

Պետական պաշտոնյաների, մարմինների դեմ և իրավական ակտերի վերաբերյալ քաղաքացիների ներկայացրած բողոքները, հայցերը քննելու նպատակով ստեղծվում է Վարչական արդարադատության դատարան, որը գտնվում է դատական իշխանության ղեկավարի վերահսկողության ներքո: Սույն դատարանի լիազորությունները, պարտավորությունները, գործունեությունը սահմանվում են օրենքով:

**Հոդված 174**

Դատական իշխանության՝ կառավարության վարչական մարմինների կողմից գործերի պատշաճ վարումը և օրենքների ճշգրիտ իրականացումը վերահսկելու իրավասության համաձայն՝ ստեղծվում է Ընդհանուր տեսչություն, որը գտնվում է դատական իշխանության ղեկավարի վերահսկողության ներքո: Սույն կառույցի իրավասություններն ու պարտավորությունները սահմանվում են օրենքով:

## Գլուխ 12
## Ռադիո և հեռուստատեսություն

**Հոդված 175**

Իրանի Իսլամական Հանրապետությունը ապահովում է Ռադիոյի և Հեռուստատեսության խոսքի ազատությունը և ազատորեն մտքերն ու գաղափարները տարածելու իրավունքը՝ պահպանելով իսլամական նորմերը և հաշվի առնելով երկրի շահերը: Իրանի Իսլամական Հանրապետության Ռադիոյի և Հեռուստատեսության խորհրդի Նախագահին նշանակում և իր զբաղեցրած պաշտոնից ազատում է երկրի Առաջնորդը: Սույն կազմակերպության գործունեությունը վերահսկվում է խորհրդի կողմից, որի անդամներն են Նախագահի երկու ներկայացուցիչները, դատական իշխանության ղեկավարը և Իսլամական խորհրդատվական խորհրդի նախագահը: Սույն կառույցի գործունեության ընդհանուր սկզբունքները և դրա ղեկավարման կարգը, ինչպես նաև վերահսկումը սահմանվում է օրենքով:

## Գլուխ 13
## Ազգային անվտանգության գերագույն խորհուրդը

**Հոդված 176**

Ազգային շահերը և Իսլամական հեղափոխությունը, տարածքային ամբողջականությունը և ազգային ինքնիշխանությունը պաշտպանելու նպատակով՝ Նախագահի ղեկավարության ներքո ստեղծվում է Ազգային անվտանգության գերագույն խորհուրդը, որն իրականացնում է հետևյալ պարտավորությունները՝

1. Առաջնորդի կողմից սահմանված ընդհանուր քաղաքականության շրջանակներում երկրի պաշտպանության և անվտանգության քաղաքականության սահմանում;
2. ընդհանուր պաշտպանական և անվտանգության ռազմավարությունների հետ կապված քաղաքական, տեղեկատվական, սոցիալական, մշակութային և տնտեսական գործունեության համակարգում;
3. երկրի նյութական և ինտելեկտուալ ռեսուրսների օգտագործում՝ ներքին և արտաքին սպառնալիքներին դիմակայելու նպատակով:

Խորհրդի կազմում ընդգրկված են հետևյալ անձինք՝

- իշխանության երեք ճյուղերի ղեկավարները

- զինված ուժերի գլխավոր շտաբի պետը
- պլանավորման և բյուջեի համար պատասխանատու պաշտոնյան
- Առաջնորդի կողմից նշանակված երկու ներկայացուցիչները
- Արտաքին գործերի, Ներքին գործերի և տեղեկատվության նախարարները
- Անհրաժեշտության դեպքում համապատասխան նախարար
- Զինված ուժերի և Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի բարձրաստիճան պաշտոնյաները

Իր պարտավորությունների համաձայն՝ Ազգային անվտանգության գերագույն խորհուրդը ձևավորում է հատուկ խորհուրդներ՝ Պաշտպանության խորհուրդը և Ազգային անվտանգության խորհուրդը: Սույն խորհուրդներից յուրաքանչյուրը գտնվում է Նախագահի կամ Նախագահի կողմից նշանակված Ազգային անվտանգության գերագույն խորհրդի անդամներից մեկի ղեկավարության ներքո: Սույն խորհուրդների իրավասությունների և պարտավորությունների շրջանակը սահմանվում է օրենքով, իսկ դրանց կազմակերպական կառուցվածքը հաստատվում է Ազգային պաշտպանության գերագույն խորհրդի կողմից: Ազգային անվտանգության գերագույն խորհրդի որոշումներն ուժի մեջ են մտնում երկրի Առաջնորդի կողմից հաստատվելուց հետո:

## Գլուխ 14
## Սահմանադրության վերանայումը

**Հոդված 177**

Անհրաժեշտության դեպքում Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության վերանայման գործընթացն իրականացվում է փուլերի հետևյալ հերթականությամբ.

Նպատակահարմարության խորհրդի հետ խորհրդակցելուց հետո երկրի Առաջնորդը Նախագահին առաջարկում է այն փոփոխությունները կամ լրացումները, որոնք պետք է կատարվեն Սահմանադրության վերանայման խորհրդի կողմից, որի կազմում ընդգրկված են հետևյալ անձինք՝

1. Սահմանադրության պահապանների խորհրդի անդամները
2. իշխանության երեք ճյուղերի ղեկավարները
3. Նպատակահարմարության խորհրդի մշտական անդամները
4. Փորձագետների խորհրդի հինգ անդամ
5. Առաջնորդի կողմից ընտրված տաս ներկայացուցիչ
6. Նախարարների խորհրդի երեք ներկայացուցիչ
7. դատական իշխանության երեք ներկայացուցիչ
8. Իսլամական խորհրդատվական խորհրդի տաս ներկայացուցիչ
9. համալսարանների դասախոսական կազմը ներկայացնող երեք դասախոս

Սույն խորհրդի գործունեության, անդամների ընտրության կարգը, նրանց առաջադրվող պահանջները սահմանվում են օրենքով: Խորհրդի որոշումները, Առաջնորդի կողմից հաստատվելուց և ստորագրվելուց հետո, ուժի մեջ են մտնում, եթե հանրաքվեի ժամանակ բացարձակ մեծամասնությունը այդ որոշումներին կողմ է քվեարկում: Սահմանադրության 59-րդ հոդվածի դրույթները կարող են չկիրառվել Սահմանադրության վերանայման համար անցկացվող հանրաքվեի դեպքում:

Պետական համակարգի իսլամական բնույթի, իսլամական նորմերի համաձայն բոլոր օրենքերի և իրավական ակտերի հիմքի, իրավական ակտերում և օրենքներում կրոնական հիմքի, Իրանի Իսլամական Հանրապետության նպատակների, կառավարման համակարգի ժողովրդավարական բնույթի, վիլայաթի սկզբունքի և իմամաթի, ինչպես նաև հանրաքվեների միջոցով, Իրանի պետական կրոնի և Ջաֆարիական մազհաբի հիման վրա երկրի կառավարման վերաբերյալ Սահմանադրության հոդվածների բովանդակությունը փոփոխման ենթակա չէ: